174

ՊԵՏՈՆԵԿԵՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆԵՑՈՒԿԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

(Հաստատված ԽՍՀՄ Աբխազոդկոմատին կից Սոցապաճովագրական Միութենական խորհրդի կողմից 4-ին հունիսի 1928 թ.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՉԻ

ՑԵՐԵՎԱՆ 1929



ՊՈՉԽՈՆԴԻՐՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՆԵՑՈՒԿԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Ա 23727

(Հաստատված ԽՍՀՄ Ակխժողկոմատին կից Սոցապահովագրական Միութենական խորհրդի կողմից 4-ին հունիսի 1928 թ.)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՀԽՍՀ ՍՈՑԱՊԳԱՆՁԱՐԿՉԻ

ԵՐԵՎԱՆ 1929

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1619 Բ.
ՊԱՏՎԵՐ 1039. ՏԻՐԱԺ 300

ՎՈՐՈՇՈՒՄ

ԽՍՀՄ Աշխատանքային կից սոցիալական ապահովագրության միութենական խորհրդի 4-ին հուլիսի 1928 թ. № 396՝ հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու կանոնների հաստատման մասին

Համաձայն ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1928 թ. մարտի 14-ի վորոշման 2-րդ հոդվածի՝ «Հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու կանոնադրության հաստատման մասին» (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1928 թ., № 17, հոդ. 145) և հոդ. հոդ. 2, 3, 4, 5, 10, 13, 14, 19 և 22 հիշյալ «կանոնադրության» (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1928 թ. № 17, հոդ. 146), ԽՍՀՄ Աշխատանքային կից Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհուրդը վորոշեց՝

1. Հաստատել և 1928 թ. հուլիսի 1-ից գործադրության մեջ մտցնել կցված «կանոնները հաշմության և նեցուկի կորցնելու դեպքում սոցիալական ապահովագրության կարգով ապահովելու մասին»:

2. Ըստ այն գործերի, վորոնց քննությունը չի ավարտված (1-ին կամ 2-րդ ինստանցիաներում) մինչև 1928 թ. հուլիսի 1-ը, կենսաթոշակ նշանակվում է և այն դեպքում, յեթե նա ունի իրավունք համաձայն կցված «կանոնների» և թե այն դեպքում, յեթե նա ունի իրավունք համաձայն մինչև սույն «կանոնների» հրապարակումը գործող վորոշումների և կարգադրությունների, (հոդ. 9-րդ սույն վորոշման) ընդ վորում բոլոր դեպքերում էլ կենսաթոշակի չափը վորոշվում է համաձայն կցված «կանոնների»:

3. Այն թոշակառուներին, վորոնք մինչև կցված «կանոնների» գործադրության մեջ մտնելը գործող վորոշումների և կարգադրությունների համաձայն (հոդ. 9-րդ սույն վորոշման), կորցրել են կենսաթոշակ ստանալու իրավունքը, թոշակի վճարումը վերականգնվել չի կարող:

4. Այն անձանց, վորոնց կենսաթոշակ նշանակելը մերժված և, այդպիսին ստանալու իրավունք չունենալու հետևանքով և վորոնք համաձայն կցված «կանոնների» ձեռք են բերել այդ իրավունքը, թույլատրվում է նորից դիմել կենսաթոշակ ստանալու, յեթե «կանոնների» հոդ. հոդ. 26, 74 և 75-ով սահմանված դիմում տալու ժամկետը չի անցել:

5. Կցված «կանոնների» գործադրության մեջ մտցնելն ինքն ըստ ինքյան չի կարող հիմք ծառայել մինչև 1928 թ. հուլիսի 1-ը նշանակված կենսաթոշակների չափը փոփոխելու համար:

6. 1928 թ. հուլիսի 1-ից հետո կենսաթոշակ նշանակելիս այն հաշմանդամներին, վորոնք վարձու աշխատանքը թողել են մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը, այլ և այն ընտանիքի անդամներին, վորոնց կերակրող ձեռքերը վարձու աշխատանքը թողել են մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը, այդպիսիների վաստակի չափը, վորից յելնելով նշանակվում է կենսաթոշակ—հաշվվում է մինչև սույն «կանոնների» գործադրության մեջ մտնելը գործող վորոշումների և կարգադրությունների համաձայն (հոդ. 9-րդ սույն վորոշման):

7. Բոլոր այն ապահովագրական դեպքերում, վորոնք առաջացել են աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից, դրանց համար պահպանվում է դիմելու յերեք տարվա ժամկետի կարգը, յեթե այդ դիմումը կը տրվի վոչ ուշ քան մինչև 1929 թ. հուլիսի 1-ը:

8. Կցված «կանոնները» յենթակա յեն գործադրման, քանի վոր հատուկ վորոշումներով չեն սահմանված բացառություններ վարձու աշխատանքով զբաղվող անձանց առանձին կատեգորիաների համար (աղագիրներ, գյուղացիական տնտեսություններում վարձու աշխատանքով զբաղվողներ և այլն):

9. Կցված «կանոնների» գործադրության մեջ մտնելու հետևանքով

վանքով (հոդ. 1–ին սույն վորոշման) վերացվում են հետևյալ վորոշումներն ու կարգադրությունները.

1) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1923 թ. դեկտեմբերի 28–ի № 196/116 շրջաբերականը «աշխանկարների տեղափոխության կարգի մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 1):

2) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. հունվարի 28–ի № 2/500 վորոշումը «աշխատանքի վայրում խեղանդամության ստանալու հետևանքով կայուն անաշխատունակություն ստացած աշխանկարների, նույնպես և խեղանդամությունից մահացած բանվորների և ծառայողների ընտանիքի անդամների ապահովության նորմաների մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. №1):

3) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. մարտի 28–ի № 137 524 շրջաբերականի կետ. կետ. 1–ին և 2–րդ «նպաստ և կենսաթոշակ նշանակելու վերաբերյալ Սոցապմարմինների վորոշումները բողոքարկելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 15), այդ շրջաբերականի վերնագրից համապատասխանորեն դուրս դցելով նաև «և կենսաթոշակները» բառերը:

4) ԽՍՀՄ Աշխատողկոմատի Կենտսոցապվարչության 1924 թ. մայիսի 14–ի № 222/550 պարզաբանությունը՝ «աշխանկարների տեղափոխության կարգի վերաբերյալ ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1923 թ. դեկտեմբերի 28–ի № 196/116 շրջաբերականի մեկնաբանության մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 19—20):

5) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. հունիսի 16–ի № 287/564 վորոշումը՝ «ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. հունվարի 3–ի № 2/500 վորոշումը՝ աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով կայուն անաշխատունակություն ստացած, նույնպես և խեղանդամությունից մահացած բանվորների և ծառայողների ընտանիքի անդամներին ապահովելու նորմաների մասին», լրացնելու և փոփոխելու վերաբերյալ («Известия НКТ СССР» 1924 թ. № 27):

6) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. հունիսի 30–ի № 289 566 վորոշումը՝ «կենսաթոշակ վճարելու խնդրում յերկրային և տրանսպորտային զանձարկղների փոխհարաբերության մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 27):

7) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. հուլիսի 23-ի № 330/579 վորոշումը՝ «ԽՍՀՄ սահմաններից դուրս դնացող աշխանկարների կենսաթոշակներ բաց թողնելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 31):

8) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1924 թ. ոգոստոսի 7-ի № 348/582 վորոշման 5-րդ հոդվածը՝ «վարձու աշխատանքով զբաղված հաշմանդամների ապահովագրության մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 33—34):

9) ԽՍՀՄ Աշխատողկոմատի կենսասոցապվարչության 1924 թ. հոկտեմբերի 6-ի № 420/598 պարզաբանությունը՝ «մահացած (կամ անհետ կորած) ապահովագրվածների դեֆեկտիվ ընտանիքի անդամներին ապահովելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1924 թ. № 40):

10) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1925 թ. հունվարի 28-ի № 24/603 շրջաբերականը՝ «սոցիալական ապահովագրության կարգով կենսաթոշակ ստացող անձանց տեղափոխության դեպքում կենսաթոշակի գործերը փոխադրելու մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 7—8):

11) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1925 թ. փետրվարի 19-ի № 79/906 վորոշումը՝ «պրոֆեսիոնալ հիվանդությունների հետևանքով աշխատունակությունը կորցրած աշխանկարների և պրոֆեսիոնալ հիվանդությունից մահացած ապահովագրվածների ընտանիքներին ապահովելու մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 14):

12) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1925 թ. փետրվարի 26-ի № 77/904 վորոշումը՝ «սոցիալական ապահովագրության նորմաների և կենսաթոշակների նորմաների մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 14):

13) ԽՍՀՄ Աշխատողկոմատի կենսասոցապվարչության 1925 թ. մարտի 20-ի № 139/627 շրջաբերական նամակը՝ «պրոֆեսիոնալ հիվանդությունների հետևանքով աշխատունակությունը կորցրած աշխանկարներին և պրոֆեսիոնալ հիվանդություններից մահացած ապահովագրվածների ապահովելու մասին Սոցիալական Ապահով-

դրության Միութենական Խորհրդի 1925 թ. փետրվարի 19-ի № 79/906 վորոշումը կիրառելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 21—22):

14) ԽՍՀՄ Աշխատանքի Կոմիսարիատի 1925 թ. մարտի 31-ի № 96/622 հրահանգը՝ «կենսաթոշակ նշանակելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 17—18):

15) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1925 թ. ապրիլի 4-ի № 114/906 վորոշումը՝ «Սոցապահովագրության կարգով ապահովություն ստանալու իրավունք ունեցող անձանց դուրքային դրության հաշվառման մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 21—22):

16) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1925 թ. ապրիլի 9-ի № 128/914 վորոշումը՝ «վարձու աշխատանքի հետ կապված խեղանդամության հետևանքով կամ պրոֆեսիոնալ հիվանդություններից աշխատունակությունը կորցրած աշխանկարների ցածր խմբերի ապահովագրության մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 21—22):

17) ԽՍՀՄ Աշխատանքի Կոմիսարիատի 1925 թ. ապրիլի 29-ի № 136/626 շրջաբերականը՝ «տրանսպորտի սոցապմարմիններին կից աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովների կազմի մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 23):

18) ԽՍՀՄ Աշխատանքի Կոմիսարիատի 1925 թ. մայիսի 12-ի № 146/628 շրջաբերականի 2-րդ կետը՝ «մի վայրից մյուսը վերադրվող աշխանկարներին և գործարարներին նպաստներ և կենսաթոշակներ բաց թողնելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1925 թ. № 25), նույնպես և այս շրջաբերականի կ. կ. 3 և 4 կենսաթոշակներին վերաբերվող մասերում:

19) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. հունվարի 4-ի № 6/600 վորոշումը՝ «սոցապահովագրության կարգով բաց թողնվող կենսաթոշակների նորմաների մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 3):

20) ԽՍՀՄ Աշխատանքի Կոմիսարիատի 1926 թ. հունվարի 30-ի № 23/603 շրջաբերականը՝ «սոցապահովագրության կարգով բաց թողնվող կենսաթոշակների նորմաների մասին» Սոցիալական Ապահովա-

գրության Միութենական Խորհրդի 1926 թ. հունվարի 4-ի № 6,900 վորոշումը կյանքում կիրառելու վերաբերյալ («Известия НКТ СССР» 1926 թ. № 6):

21) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1926 թ. փետրվարի 18-ի № 38,605 պարզաբանությունը՝ «աշխանկարներին կենսաթոշակ նշանակելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 9):

22) ԽՍՀՄ Աշխատողկոմատի և Հաղորդակցության ճանապարհների Ժողկոմատի 1926 թ. մարտի 5-ի № 53,603 հրահանգը՝ «Սոցապահովագրության կարգով բաց թողնվող կենսաթոշակների նորմաների մասին» Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. հունվարի 6-ի № 6/900 վորոշումը տրանսպորտի վրա տարածելու կարգի մասին («Известия НКТ СССР» 1926 թ. № 29):

23) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. ապրիլի 1-ի № 87/906 վորոշումը՝ «մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով աշխատունակությունը կորցրած աշխատանքի անկարների և մինչև 1925 թ. հոկտեմբերի 1-ը աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով մահացած ապահովագրվածների ընտանիքի անդամների կենսաթոշակների չափերը վերանայելու մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 15—16):

24) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. ապրիլի 1-ի № 91/908 վորոշման հոդ. հոդ. 5, 6, և 7 «Աշխատանքների Կոմիտեների կողմից՝ գործազուրկներին աշխատանքային ոգնություն հասցնելու նպատակով կազմակերպված հասարակական աշխատանքներում, կամ կոլեկտիվներում ու ձեռնարկներում զբաղված գործազուրկների սոցիալական ապահովագրության մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 15—16):

25) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. ապրիլի 1-ի № 95/909 վորոշումը՝ «սոցիալական ապահովագրության կարգով բաց թողնվող կենսաթոշակի նորմաների մասին» Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1926 թ. հունվարի 4-ի № 6/900 վորոշման 14-րդ հոդվածը փոփոխելու վերաբերյալ («Известия НКТ СССР» 1926 թ. № 17):

26) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *մայիսի* 7-*ի* № 112/911 *վորոշումը՝* «*Սեղոնային բնույթ կրող աշխատանքներում զբաղված անձանց հաշմության, մահանալու կամ անհետ կորչելու դեպքերում նրանց ընտանիքների կենսաթոշակը հաշվելու կարգի մասին*» («Известия НКТ СССР» 1926 *թ.* № 21):

27) *ԽՍՀՄ Աշխժողկոմատի* 1926 *թ.* *հուլիսի* 10-*ի* № 145/625 *հրահանգը՝* «*Աշխանկարների և մահացած կամ անհետ կորած ապահովագրվածների ընտանիքների անդամների ապահովության կանոնագրության* 5-*րդ հոդվածը փոփոխելու մասին—ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի* 1926 *թ.* *մայիսի* 14-*ի վորոշումը կիրառելու կարգի վերաբերյալ*» *և* «*սոցիալական ապահովագրության կարգով նպաստներ ստանալու համար պահանջներ ներկայացնելու ժամկետների ու ժամանակին չպահանջված կենսաթոշակների վերհարման վերջին ժամկետների մասին ժամանակավոր կանոնների վերաբերյալ*» («Известия НКТ СССР» 1926 *թ.* № 27—28):

28) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *սեպտեմբերի* 9-*ի* № 206/917 *վորոշումը՝* «*մինչ հեղափոխական ժամանակի դերատեսչական թոշակառուներին բաց թողնվելիք կենսաթոշակի չափի մասին*» («Известия НКТ СССР» 1926 *թ.* № 36):

29) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *սեպտեմբերի* 27-*ի* № 225/921 *վորոշումը՝* «50 *տարեկանից բարձր հասակում հաշմություն ստացած աշխատանքի անկարների աշխատանքի ստաժը հաշվելու կարգի մասին*» («Известия НКТ СССР» 1926 *թ.* № 40):

30) *Սոցիալական ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *սեպտեմբերի* 27-*ի* № 236/923 *վորոշումը՝* «*նպաստների նորմաները և կենսաթոշակների առավելագույն չափերը սահմանելու (հիմք ընդունելով՝ ավյալ վայրի միջին աշխատավարձի չափը) կարգի մասին*» («Известия НКТ СССР» 1926 *թ.* № 41-42):

31) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *սեպտեմբերի* 9-*ի* № 912/919 *վորոշումը՝* «*վորպես*

յուսավորության աշխատավորներ վարձու աշխատանքով զբաղվող անձանց հաշմության և նրանց մահանալու կամ անհետ կորչելու դեպքում նրանց ընտանիքների կենսաթոշակը հաշվելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 38):

32) ԽՍՀՄ Աշխատողկոմատի կենսասոցապվարչության 1926 թ. նոյեմբերի 30-ի № 258/641 շրջաբերականը՝ «կենսաթոշակի համար սահմանած դիմում տալու ժամկետը անցնելու հետևանքով կորցրած իրավունքը վերականգնելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1926 թ. № 49–50):

33) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1927 թ. մայիսի 9-ի № 110 վորոշումը՝ համաճարակների դեմ կռվելու աշխատանքներում զբաղված բժշկական կազմի կենսաթոշակային ապահովության մասին» («Известия НКТ СССР» 1927 թ. № 22):

34) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1927 թ. հունիսի 16-ի № 157 պարզաբանումը՝ «այն անձանց, վորոնց նկատմամբ փոխվել և ապահովագրական ապահովության ծավալը, այդպիսիների վարձու աշխատանքի ստաժը և Բարսայում ցուցակագրվելու ժամկետը վորոշելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1927 թ. № 31):

35) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1927 թ. սեպտեմբերի 8-ի № 306 վորոշումը՝ «համաճարակների դեմ պայքարելու աշխատանքներում զբաղված անասնաբուժական կազմի կենսաթոշակային ապահովության մասին» («Известия НКТ СССР» 1927 թ. № 44):

36) Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1927 թ. հոկտեմբերի 6-ի № 335 վորոշումը՝ «20 տարուց վոչ պակաս աշխատած աշխանկարների վարձու աշխատանքի ստաժը հաշվելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1927 թ. № 46–47):

37) ԽՍՀՄ Աշխատողկոմատի 1927 թ. նոյեմբերի 17-ի № 361 շրջաբերականի 9, 11 և 12-րդ կետերը՝ «միասնական կենսաթոշակային դրքույկ մտցնելու մասին» («Известия НКТ СССР» 1927 թ. № 52):

38) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1927 *թ.* *նոյեմբերի* 30-*ի* № 432 *վորոշումը՝* «*մինչ հաշմության առաջացումը ցածր վարձատրվող աշխատանքի անցած տեղանց կենսաթոշակը և մինչև մահանալը կամ անհետ կորչելը ցածր վարձատրության անցած ապահովագրվածների ընտանիքների կենսաթոշակները հաշվելու կարգի մասին*» («Известия НКТ СССР» 1928 *թ.* № 7–8):

39) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1927 *թ.* *դեկտեմբերի* 14-*ի* № 428 *վորոշումը՝* «*Սոցիալական ապահովագրության կարգով բաց թողնվող կենսաթոշակների նորմաների մասին*» *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1926 *թ.* *հունվարի* 4-*ի* № 6,900 *վորոշումը փոփոխելու մասին* («Известия НКТ СССР» 1928 *թ.* № 3):

40) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1927 *թ.* *դեկտեմբերի* 14-*ի* № 431 *վորոշումը՝* «*աշխատանքի վայրում խեղանդամության առանալու հետևանքով կայուն անաշխատունակություն ստացած աշխատանքի անկարների և խեղանդամությունից մահացած բանվորների և ծառայողների ընտանիքների անդամներին տրվող կենսաթոշակների նվազագույն չափի մասին*» («Известия НКТ СССР» 1928 *թ.* № 5):

41) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1928 *թ.* *հունվարի* 31-*ի* № 70 *վորոշումը՝* «*համաճարակների դեմ կռվելու աշխատանքներում գրաղված բժշկական կազմի կենսաթոշակային ապահովության մասին*» *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1927 *թ.* *մայիսի* 9-*ի* № 110 *վորոշման* 1-*ին հոդվածը փոփոխելու մասին* («Известия НКТ СССР» 1928 *թ.* № 7–8):

42) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1928 *թ.* *մարտի* 5-*ի* № 176 *վորոշումը՝* «*Հոգևական հիվանդությունների բուժական հաստատություններում տեղավորված հոգևական հիվանդներին կենսաթոշակ բաց թողնելու կարգի մասին*» («Известия НКТ СССР» 1928 *թ.* № 17):

43) *Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի* 1928 *թ.* *ապրիլի* 5-*ի* № 250 *վորոշման* 1, 2 *և* 3-*րդ*

հողվածները՝ «կալանքի տակ գտնվող ապահովագրվածներին կենսաթոշակ բաց թողնելու կարգի մասին» («Известия НКТ СССР» 1928 թ. № 19):

10. Միութենական Հանրապետությունների Աշխատողկոմատներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհրդներին առաջարկվում է հրատարակել ցանկ՝ Հանրապետական համապատասխան վարչությունների և կարգադրությունների, որոնք կցված «կանոնների» գործադրության մեջ մտնելու հետևանքով կորցնում են իրենց ուժը:

Սոցիալական Ապահովագրության Միութենական
Խորհրդի Նախագահ՝ ՆԵՄՉԵՆԿՈ

Պատասխանատու Քարտուղար՝ ԿՈՒՉԵԱՏԻՆ

4 Հուլիսի 1928 թ.

ԽՍՀՄ ԱՇԽԱՏՈՂԿՈՄԱՏԻՆ ԿԵՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՈՒԼԻՍԻ 4-Ի № 397 ԿԱՆՈՆՆԵՐԸ՝ ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ՑԵՎ ՆԵՑՈՒԿ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ.

1-ԻՆ ՄԱՍ

ՀԱՇՄՈՒԹՅԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎՎԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1-ին գլուխ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.

1. *Կայուն անաշխատունակության (հաշմության) դեպքում ապահովվելու պայմանները ու նորմաները վորոշվում են՝*

ա) Անաշխատունակության առաջացման պատճառներից (հոդ. 2-րդ).

բ) Կորցրած անշխատունակության աստիճանից (հոդ. 7).

2. *Ըստ պատճառների հաշմությունները տարբերվում են— առաջացած՝*

ա) Դժբախտ պատահարից՝ կապված վարձու աշխատանքի հետ (աշխ. խեղանդամություն հոդ. 3).

բ) Պրոֆեսիոնալ հիվանդություններից (հոդ. 5).

գ) Ընդհանուր պատճառներից (հիվանդություն, վոչ աշխատանքային խեղանդամություն, ծերություն):

3. *Դժբախտ պատահարը համարվում է վարձու աշխատանքի հետ կապված, յեթե այդ տեղի յե ունեցել՝*

ա) Աշխատավորի կողմից իր սովորական պարտականությունները կատարելու ժամանակ, նույնպես և վարձողի կամ նրա լիազորների կողմից տրված առանձին հանձնարարությունները կատարելու ժամանակ (նաև գործուղման մեջ գտնվելիս).

բ) Հոգուտ հիմնարկ–ձեռնարկի կատարած գործողությունների ժամանակ, յեթե նույնիսկ այդ տրված է առանց վարձողի կամ նրա լիազորների հանձնարարության.

գ) Տվյալ հիմնարկի կամ ձեռնարկի հետ կապված հասարակական պարտականությունները կատարելու ժամանակ.

դ) Աշխատանքի ժամերին հիմնարկ–ձեռնարկի տերիտորիայում կամ աշխատանքի այլ վայրում, ներառյալ նաև աշխատանքի սկզբում և վերջում տրվող ընդմիջումները (արտադրության գործիքները, հագուստը և այլն կարգի բերելու համար).

ե) Աշխատանքի ժամերին հիմնարկ–ձեռնարկի մոտերքը կամ աշխատանքի այլ վայրում գտնված ժամանակ, յեթե այդտեղ գտնվելը չեր հակասում ներքին կարգապահության կանոններին.

զ) Աշխատանքի գալու և աշխատանքից տուն վերադառնալու ճանապարհին:

4. Բժշկական կազմից այն անձինք, որոնց հաշմությունը առաջացել է կապված խոլերայի համաճարակի, բծավոր տիֆի, վորովայնի տիֆի, քութեշի, բորի, սիբիրական խոցի, մալարիայի, համաճարակային ենցիֆալիտի դեմ կռվելու աշխատանքից, ապահովվում են նույն հիմունքներով, ինչ հիմունքներով աշխատանքի վայրում խեղանդամությունից հաշմություն ստացած անձինք: Նույն հիմունքներով են ապահովվում նաև անասնաբուժական կազմից այն անձինք, որոնց հաշմությունը առաջացել է կապված սապի համաճարակի, կատաղության և սիբիրական խոցի դեմ կռվելու աշխատանքների հետ:

5. Սույն կանոնների իմաստով պրոֆեսիոնալ հիվանդություններ համարվում են ԽՍՀՄ Աշխատողների Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից հաստատված ցուցակում թված հիվանդությունները (ցուցակը կցված է):

6. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում ապահովվելու իրավունքով ոգտվում են բոլոր այն վարձու աշխատողները, որոնց վրա տարածվում է լրիվ ապահովագրություն: Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց կամ պրոֆեսիոնալ հիվանդություններից առաջացած հաշմության

դեպքում ապահովվելու իրավունքով ազատվում են այն աշխատող անձինք, վերոնց վրա տարածվում է լրիվ կամ մասնակի ապահովագրություն:

7· Ըստ իրենց աշխատունակությունը կորցնելու աստիճանի աշխանկարները բաժանվում են հետևյալ խմբերի՝

I Աշխանկարներ, որոնք վոչ միայն անընդունակ են վերևից վաստակ բերող աշխատանքի, այլ և իրենց առորյա բնական կարիքները բավարարելու համար կարոտ են ուրիշի ոգնության:

II Աշխանկարներ, որոնք անընդունակ են վերևից վաստակ բերող աշխատանքի, բայց իրենց առորյա բնական կարիքները բավարարելու համար ուրիշի ոգնության կարիքը չեն զգում:

III Աշխանկարներ, որոնք անընդունակ են մշտական վարձու աշխատանքի, բայց կարող են մի ջոցներ հայթայթել պատահական և թեթև աշխատանքով, յեթե ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության. սրանց աշխանկարությունը կառաջացնի վաստակի պակասեցում 50%-ից ավելի:

IV Աշխանկարներ, որոնք ընդունակ են շարունակելու վարձու աշխատանքը ցածր աշխատունակությամբ, յեթե ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության աշխանկարությունը կառաջացնի վաստակի պակասեցում մոտավորապես 30–50%-ի սահմաններում:

V Աշխանկարներ, որոնք ընդունակ են շարունակելու վարձու աշխատանք ցածր աշխատունակությամբ, յեթե ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության սրանց աշխանկարությունը կառաջացնի վաստակի կրճատում մոտավորապես 15-ից մինչև 30%-ի սահմաններում:

VI Աշխանկարներ, որոնք կարող են շարունակել աշխատանքը ըստ իրենց պրոֆեսիայի, բայց ցածր աշխատունակությամբ, յեթե ըստ բժշկական եքսպերտ հանձնաժողովի յեզրակացության սրանց աշխանկարությունը իրենից կառաջացնի վաստակի կրճատում վոչ ավելի 15%-ից:

8· Աշխատունակությունը կորցրած չեն համարվում այն անձինք, որոնք հաշմության հետևանքով թողնում են նախկին

պրոֆեսիան, բայց ըստ բժշկական եզրակացության, կարող են փոխադրվել այլ պրոֆեսիայի աշխատանքի նույն կամ ավելի բարձր աշխատավարձով՝ առանց մասնագիտական վերապատրաստման և պրոտեզի:

9. Ըստ ընդհանուր կանոնի, աշխանկարներին սոցապմարմինները ապահովում են դրամական կենսաթոշակներ վճարելով:

Աշխանկարների համաձայնությամբ դրամական կենսաթոշակների վճարումը կարող է փոխարինվել նրանց հաշմանդամական հիմնարկությունում տեղավորելով կամ, յերկրորդ կարգի ձրի պատենտով՝ առևտուր անելու կամ իր արհեստով զբաղվելու համար:

10 Աշխանկարը հաշմանդամական կոոպերատիվ միավորների մեջ մտնելու դեպքում, Սոցապդանձարկղները կարող են նրանց ցույց տալ աջակցություն՝ նրա փայավճարը կամ դրա մի մասը մուծելով—այն չափով, որ այդ դումարը չանցնի 6 ամսվա կենսաթոշակի դումարի չափից:

Սույն հոդվածի կիրառման կարգը վորոշվում է Խորհրդային Միության մեջ մտնող Հանրապետությունների Աշխատողական-ներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից:

11. Սոցապդանձարկղները աշխանկարների համաձայնությամբ կարող են նրանց ուղարկել մասնագիտական հիմնարկներ սովորելու և վերապատրաստվելու համար:

2-րդ գլուխ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

12. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքով ոգտվում են այն անձինք, վորոնք դասվում են 1-ին յերեք խմբակներից վորևիցե մեկին: Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց և պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքով ոգտվում են՝ ա) լրիվ ապահովագրության յենթակա անձինք, յեթե նրանք հաշմության վեց խմբակներից վորևիցե մեկին են դասվում. բ) մասնակի ա-



պահովագրության յենթակա անձինք, յեթե նրանք գտնվում են հաշմության 1-ին յերկրք խմբակներից վորևիցե մեկին։

13. Հաշմության դեպքում ապահովություն տրվում է՝

ա) Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում՝ պայմանով, յեթե վորոշված տևողությամբ վարձու աշխատանքի ստաժը ունի (հոդ. 14).

բ) Աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց և պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում—անկախ վարձու աշխատանքի ընդհանուր տևողությունից։

14. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության դեպքում ապահովություն ստանալու համար պահանջվում և վարձու աշխատանքի հետևյալ տևողությունը, վորը աշխանկարի կողմից աշխատանքը թողնելու ժամանակ կամ վարձու աշխատանքի շրջանում անցնում եր լրիվ ապահովագրությամբ՝

Մինչև 20	տարեկան	— 1	տարի
20	»	— 2	»
25	» բարձր	— 3	»
30	» բարձր	— 4	»
35	» բարձր	— 5	»
40	» մին. 45 տ.	6	»
45	» » 50 տ.	7	»
50-ից	բարձր	8	»

15. Վարձու աշխատանքի ստաժի մեջ մտնում են՝

ա) Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարման ժամանակամիջոցը.

բ) Աշխատանքի Բորսաների կոմիտեների կողմից կազմակերպված կոլլեկտիվներում և ձեռնարկություններում գործազուրկի անցկացրած ժամանակը։

գ) Հասարակական աշխատանքներում գործազուրկի անցկացրած ժամանակը, յեթե մինչև հասարակական աշխատանքների ուղարկվելը գործազուրկը ստանում եր գործազրկության նպաստ կամ այդպիսին ստանալու իրավունք ուներ։

16. Մասնակի ապահովագրությամբ անցնող աշխատանքների վրա լրիվ ապահովագրություն տարածելու դեպքում—այդ աշ-

Ա 23424

ՀԱՅ ԽՍՀ ՊԵՏԱԿԱՆ ՄՈՒՆԻՊԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

խատանքներում գտնվելը, նաև մասնակի ապահովագրությամբ անցնելու շրջանը մտցվում են 14-րդ հոդվածով պահանջվող ստաժի մեջ։

17. Այն անձանց նկատմամբ, վորոնք վարձու աշխատանքով զբաղվել են թե մինչև զինվորական ծառայությունը և թե այդ-պիսինից հետո—ընդհանուր առմամբ մեկ տարուց վոչ պակաս, ստաժը հաշվելիս վարձու աշխատանքին են հավասարեցվում (հոդ. 14)՝ ա) Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի շարքերում առանց ընդմիջումների՝ աշխատանքը՝ պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող շարքային և կրտսեր հրամկազմի համար։ բ) Բանվորագյուղացիական Կարմիր Բանակի շարքերում աշխատանքը՝ դերազանիկ (сверхсрочная) ծառայության մեջ գտնվող բարձր, ավագ, միջին և կրտսեր հրամկազմի համար։

18. Վարձու աշխատաքի ստաժի մեջ չի մտնում (հոդ. 14) ցարական կարգերում և հակահեղափոխական կառավարությունների ժամանակ վոստիկանատանը, ժանդարմերիայում և այլ պաշտոններում, վորոնց դերն և յեղել հեղափոխական շարժման դեմ կռվելը և ԽՍՀՄ կենտրոնական 1926 թ. սեպտեմբերի 28-ի խորհուրդների ընտրությունների հրահանգի 11-րդ հոդվածի «ի» և «կ» կետերով (ԽՍՀՄ Որենսդրքի ժողովածու 1926 թ. № 63. հոդ. 501) թված պաշտոնները։ Չի հաշվվում վարձու աշխատանքային ստաժ նաև այդ պաշտոններին նախորդող աշխատանքը։

19. 14-րդ հոդվածով պահանջվող ստաժը հաշվելիս նկատի չի առնվում այն վարձու աշխատանքը, վորը նախորդել և կրոնավորի աշխատանքին, հոգևորական ոծվելուն, կամ 3-րդ և բարձր կարգի պատենտով ինքնուրույն առևտրական գործունեությամբ կամ թե արհեստագործությամբ զբաղվելուն՝ շահ ստանալու նպատակով, ուրիշի աշխատանքը շահագործելուն։ Գյուղացիական տնտեսության մեջ ոժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ ժողկոմխորհի 1928 թ. ապրիլի 19-ին հաստատած «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին ժամանակավոր կանոնների» հոդ. 1—ԽՍՀՄ Որենքների ժողովածու 1925 № 26 հոդ. 183 և 1927 թ. № 60. հոդ. 609), այլ և տնտ-

նագործների ու արհեստավորների մոտ յերկուսից վոչ ավելի աշակերտների աշխատանքի կիրառումը չի կարող հիմք ծառայել նախորդող վարձու աշխատանքը ստաժի մեջ չմտցնելու համար։

20· Վարձու աշխատանքի մեջ հինգ տարուց ավելի տևողությամբ ընդմիջում լինելու դեպքում, մինչև ընդմիջումը կատարած աշխատանքը, ստաժը հաշվելիս նկատի չի առնվում։ Հընդամայա ընդմիջումի մեջ չի մտնում ուսումնական հաստատություններում սովորելու ժամանակը, նույնպես և 16–րդ հոդվածի «ա» և «բ» կետերում հիշված պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվելու ժամանակը։

21· Հաշմության դեպքում ապահովություն տրվում է՝ յեթե հաշմությունն առաջացել է՝

ա) Վարձու աշխատանք կատարելու շրջանում, կամ այդպիսին թողնելու որից յերկու տարի հետո։

բ) Ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցնելու որից վոչ ուշ, քան յերկու տարի հետո, յեթե վարձու աշխատանքը դադարեցված և ժամանակավոր անաշխատունակության շրջանում։

գ) Գործազրկության դեպքում ապահովություն ստանալու շրջանում։

Յեթե բժշկական եքսպերտ մարմինների կողմից հաշմության առաջացման ժամանակը չի պարզվում, այդ դեպքում հաշմության առաջացման որը հաշվում է հաշմություն սահմանելու ժամանակից։

22· Սոցիալական ապահովագրության կարգով ապահովվող գործադուրկներին (հոդ. 21, կետ «գ») վերաբերվում են՝

ա) գործադուրկներ, վորոնք տվյալ գործազրկության դեպքում նպաստը ստանում են մինչև վերջին ամիսը։

բ) գործադուրկներ, վորոնք նպաստ չեն ստանում՝ ամուսնանալու հանգամանքի տակ գտնվելու հետևանքով, բայց գործադուրկների համար սահմանված ցուցակագրության յերկու տարուց վոչ ավելի անց։

գ) գործադուրկներ, վորոնք զբաղված են Աշխարհամասերի կոմիտեների կողմից կազմակերպված կոլեկտիվներում և ձեռնարկություններում:

դ) գործադուրկներ, վորոնք զբաղված են հասարակական աշխատանքներում, յեթե միայն նրանք մինչև հասարակական աշխատանքի ուղարկվելը ստանում եյին գործազրկության նպաստ կամ այդպիսինի իրավունք ունեյին:

23. Կենսաթոշակ չի նշանակվում, յեթե հաշմությունը առաջացել է այդ անձնավորության հանցագործության հետևանքով, նաև յեթե հանցավորը դատարանի վորոշմամբ դատապարտված է պարտադիր աշխատանքների կամ ազատազրկման զրաչի ժամկետով:

Պարտադիր աշխատանքների կամ ազատազրկման ժամկետները, վորոնց ընթացքում կենսաթոշակ չի նշանակվում՝ վորոշվում է Խորհրդային Միության մեջ մտնող Հանրապետությունների Աշխատողական Ատյանների կից սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից համաձայն տվյալ դաշնակից Հանրապետության քրեական որենսդրքով նախատեսված սոցիալական պաշտպանության միջոցների:

24. Հաշմության կենսաթոշակ չի նշանակվում այն անձանց, վորոնք կենսաթոշակի մասին դիմում տալու ժամանակ զբաղված են լինում 3-րդ կամ բարձր պատենտի ինքնուրույն առևտրական գործունեությամբ, ինքնուրույն արհեստագործությամբ կամ թե շահ ստանալու նպատակով ոգտվում են ուրիշի վարձու աշխատանքով:

Գյուղացիական տնտեսությունների մեջ ոժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1928 թ. ապրիլի 18-ի հաստատված «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանքի կիրառման պայմանների մասին ժամանակավոր կանոնների» հոդ. 1—ԽՍՀՄ Որենքների Ժողովածու 1925 թ. № 26, հոդ. 183 և 1927 թ. № 609), այլ և արհեստավորների և տնայնագործների մոտ յերկու աշակերտից վոչ ավելի աշխատանքի կիրառումը չի կարող կենսաթոշակ նշանակելուն խոչընդոտ հանդիսանալ:

25. Այն անձնավորությունը, որն ունի իրավունք կենսաթոշակ ստանալու մի քանի հիմունքներով (որինակ՝ անհատական կենսաթոշակ, ուսուցչական, հաշմության և այլն), այդպիսիներին իրավունք և տրվում ընտրելու դրանցից որևիցե մեկը:

26. Հաշմության կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները պետք է տրվեն սոցիալական ապահովագրական դանձարկղներին վոչ ուշ, քան վարձու աշխատանքը թողնելուց կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցնելուց յերկու տարի հետո (յեթե վարձու աշխատանքը թողնված և ժամանակավոր անաշխատունակության շրջանում) կամ թե գործազրկության ապահովություն ստանալու շրջանում հոդ. 22):

Սույն հոդվածում հիշված ժամկետից ուշ դիմելու դեպքում, զրկվում են սոցիալական ապահովության կարգով հաշմության դեպքում ապահովելու իրավունքից:

27. Բացառիկ դեպքերում, դրա համար հատուկ հարգելի հիմքեր ունենալով, Միութենական Հանրապետությունների Աշխատողների Դելեգատների Գլխավոր Վարչություններն իրավունք ունեն վերականգնելու կենսաթոշակի մասին դիմելու 26-րդ հոդվածով սահմանված ժամկետը:

Բաց թողնված ժամկետը վերականգնելու կարգը վորոշում և Միութենական Հանրապետությունների Աշխատողների Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից:

3-ՐԴ ԳԼՈՒԽ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

28. Լրիվ ապահովագրությամբ անցնող անձանց կենսաթոշակի չափը վորոշվում է մինչև աշխատանքի թողնելը կամ աշխատանքի ընթացքում հաշմության առաջանալը նրանց յերկու տարվա ընթացքում կատարած վերջին 12 ամսվա վարձու աշխատանքի միջին ամսական աշխատավարձից:

Այն անձինք, վորոնք վերջին յերկու տարվա ընթացքում 12 ամսից քիչ են աշխատել, կենսաթոշակը հաշվվում է նրանց աշխատած ժամանակի միջին ամսական դաղումից: Այդ դեպքում հաշվի

առնվող դադումը չպետք է գերազանցի տվյալ անձի վերջին աշխատանքի տարիֆային դրույքի տեկ ու կեսից (կամ նույն վոստկի և պրոֆեսիայի անձի)։

29. Սեզոնային պրոֆեսիայի բանվորների կենսաթոշակը, վորոնք դասված են լրիվ ապահովագրության, հաշվում են նրանց միջին ամսական դադումից, վորն ստացվում է սեզոնային դադումը 12-ի վրա բաժանելով։ Սեզոնային դադումը համարվում է ամբողջ սեզոնի ընթացքում տվյալ պրոֆեսիայի վարձու աշխատանքի ընդհանուր դադումը (հոդ. 30)։

Եթե վերջին տարվա ընթացքում տվյալ անձնավորությունն աշխատել է վոչ լրիվ սեզոն, այդ դեպքում պակսող ժամանակամիջոցի համար վերցվում է համապատասխան թվով նախորդ տարվա վերջին ամիսների դադումը։ Եթե այդ անձնավորությունը վերջին յերկու տարվա ընթացքում ընդհանուր առմամբ մի լրիվ սեզոնից քիչ է աշխատել, այդ դեպքում նրա սեզոնային դադումը հաշվվում է՝ աշխատած ժամանակամիջոցի միջին ամսական աշխատավարձը բազմապատկելով տվյալ պրոֆեսիայի սեզոնի տևողության վրա (հոդ. 30)։ Վերջին դեպքում հաշվի առած միջին ամսական դադումը չպետք է գերազանցի տվյալ անձի մինչև վարձու աշխատանքի զադարեցնելը նրա տարիֆային դրույքի մեկ ու կես չափից (կամ նրա հետ միահամատար կվալիֆիկացիայի և նույն պրոֆեսիա ունեցող անձի)։

30. Սեզոնային պրոֆեսիաների ցուցակը, նույնպես և նրանց աշխատանքի տևողությունը սահմանվում են անմիջականորեն Միութենական Հանրապետությունների Աշխատողկոմատների Գլխավոր գործադիր մարմիններին յենթակա Սոցապդանձարկղների կողմից, իսկ տրանսպորտում՝ յերկաթուղային, ջրային, յերկաթուղային և ջրաշրջանային ապահովագրական դանձարկղների կողմից՝ համաձայնեցնելով համապատասխան արհմիության հետ։

Այդ առթիվ ծագած տարաձայնությունները լուծվում են տեղական աշխատաժիններին (կամ Աշխատողկոմատի համապատասխան մարմիններին) և միջմիութենական միավորների համաձայնությամբ, իսկ տրանսպորտում ծագած տարաձայնությունները լուծ-

վում են ԽՍՀՄ Աշխատողների Սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի կողմից։

31. Բոլոր դեպքերում մինչև ամսական դաղումը հաշվելիս (հոդ. հոդ. 28 և 29) դաղումի մեջ են մտնում ժամանակավոր անաշխատունակության նպաստները, իսկ նպաստ ստանալու ժամանակամիջոցը, մտցվում է վարձու աշխատանքի ստաժի մեջ։

32. Մինչև 18 տարեկան հասակը անկարացած անձանց կենսաթոշակը հաշվվում է ընդհանուր հիմունքներով։ Այդ անձանց 18 տարին լրանալուց հետո կենսաթոշակի չափը վերանայվում է և հաշվվում է յեկեղով համապատասխան պրոֆեսիոնալ միության հասակավոր սահմանած բանվորի մինչև վաստակից, բայց վոչ պակաս նրա նախորդ կենսաթոշակից։

33. Բարձր վորակի աշխատանքի մեջ 5 տարուց վոչ պակաս աշխատած անձանց, վորոնք փոխադրվել են ցածր վորակի աշխատանքի, կենսաթոշակը հաշվվում է նրանց նախկին վաստակից, յեթե միայն բարձր վորակի աշխատանքը թողնելու որվանից անցել է վոչ ավել քան 4 տարի՝ 15 տարվա ընդհանուր ստաժ ունեցողների համար և վոչ ավելի քան 3 տարի՝ 15 տարուց պակաս ստաժ ունեցողների համար։

34. Այն աշխանկարները, վորոնք վարձու աշխատանք են կատարում և նրանց այժմյան վարձատրությունը զերազանցում է նախկին աշխատավարձից, այդ դեպքում կենսաթոշակ նշանակվում է, յեկեղով նրանց նոր աշխատավարձից ,յեթե միայն ավյալ անձնավորությունը այդ բարձր աշխատավարձով աշխատում է 2 տարուց վոչ պակաս։

35. Աշխատավարձի դումարի մեջ, վորից յեկեղով հաշվվում է կենսաթոշակը, մտնում են (հոդ. հոդ. 28 և 29), բոլոր այն ձևի վարձատրությունները, վորոնցից համաձայն գործող որենդրության դանձվում են ապմուծանքներ։

36. Ընդհանուր պատճառներից անաշխատունակությունը կորցրած աշխանկարների համար, վորոնք ունեն ներքևում նշված ամսական դաղումը, կենսաթոշակ նշանակվում է ամսական հետևյալ չափով՝

ա) Տաս ռուբլուց վոչ ավել դաղում ունեցող առաջին, յերկրորդ և յերրորդ կարգի աշխանկարներին լրիվ դաղումի չափով:

բ) Տաս ռուբլուց ավել, բայց 14 ռուբլուց վոչ բարձր դաղում ունեցող առաջին և յերկրորդ կարգի աշխանկարներին լրիվ դաղումի չափով, իսկ 3-րդ կարգի աշխանկարներին 10 ռուբլու չափով:

գ) 14 ռուբլուց ավել, բայց վոչ բարձր 20 ռուբլուց դաղում ունեցող 1-ին կարգի աշխանկարներին—լրիվ դաղումի չափով, 2-րդ կարգի աշխանկարներին 14 ռուբլու չափով, իսկ 3-րդ կարգի աշխանկարներին—10 ռուբլու չափով:

դ) 20 ռուբլուց ավել, բայց վոչ բարձր 1-ին և 2-րդ դոտում 40 ռուբլուց, իսկ 3-րդ և 4-րդ դոտում 30 ռուբլուց դաղում ունեցող 1-ին խմբի անկարներին լրիվ դաղումի չափով, 2-րդ խմբի աշխանկարներին—դաղումի ⅔-ի չափով, իսկ 3-րդ խմբի աշխանկարներին դաղումի ½-ի չափով:

յե) Ներքոիհշյալ սահմաններում դաղում ունենալու դեպքում՝

	Ամսական կենսաթոշակի չափը		
	1 խումբ	2 խումբ	3 խումբ
1 և 2 դոտիներում 40 ռ. մինչև 60 ռ. դաղում ունեցողներին . .	40 ռ.	27 ռ.	20 ռ.
3 և 4 դոտիներում 30 ռ. մինչև 45 ռ. դաղում ունեցողներին . .	30 ռ.	20 ռ.	15 ռ,
5 և 6 դոտիներում 20 ռ. մինչև 30 ռուբլի դաղում ունեցողներին	20 ռ.	14 ռ.	10 ռ.

37. Ընդհանուր պատճառներից աշխատունակությունը կորցրած անկարներին, յեթե նրանց ամսական դաղումը առաջին և յերկրորդ դոտիներում գերազանցում է 60 ռուբլուց, 3-րդ և 4-րդ դոտիներում գերազանցում է 45 ռուբլուց և 5-րդ ու 6-րդ դոտիներում 30 ռուբլուց (36-րդ հոդվածում կետ «յե»)—կենսաթոշակ նշանակվում հետևյալ չափով՝

1-ին խմբի աշխանկարներին դադումի				2/3-ը
2-րդ »	»	»		4/9-ը
3 րդ »	»	»		1/3 ը

38· Լրիվ ապահովագրության անցնող այն աշխանկարներին, վորոնց հաշմությունը առաջացել և աշխատանքի վայրում խեղանդամության հետևանքով կամ պրոֆեսիոնալ հիվանդություններից, կենսաթոշակ նշանակվում և հետևյալ չափերով·

1-ին խմբի հաշմանդամներին				լրիվ դադումը
2-րդ »	»	»	»	3/4-րդ
3-րդ »	»	«	»	1/2-րդ
4-րդ »	»	»	»	1/3-րդ
5-րդ »	»	»	»	1/6-րդ
6-րդ »	»	»	»	1/10-րդ

39· Մասնակի ապահովագրությամբ անցնող խեղանդամներին կենսաթոշակ նշանակվում և հետևյալ չափերով՝

	Մասնակի ապահովագ. 1-ին խումբ	Մասնակի ապահովագր. 2-րդ խումբ.
Աշխանկարուի, 1-ին խումբ	20 ռ.	12 ռ.
» 2-րդ »	15 ռ.	9 ռ.
» 3-րդ »	10 ռ.	6 ռ.

40· Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակը հաշվելու ժամանակ, այն անձանց, վորոնց դադումը դերազանցում և 1, 2 և 3-րդ գոտիներում 225 ռուբլուց և 4-րդ, 5-րդ, 6-րդ գոտիներում 180 ռուբլուց—կենսաթոշակը հաշվվում և յելնելով հիշյալ առավելագույն դադումից՝ ըստ համապատասխան գոտիների։

41· Այն դեպքերում, յերբ աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալուց կամ պրոֆեսիոնալ աշխատունակությունը կորցրած անկարի հաշմությունը ուժեղանում և ընդհանուր հիվանդությունների հետևանքով (անկախ աշխատանքի խեղանդամությունից և պրոֆեսիոնալ հիվանդությունից, այդ դեպքում կենսաթո-

չակ նշանակվում և ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության հիմունքներով, բայց վոչ պակաս քան նրան հասնում և խեղանդամությունից և պրոֆեսիոնալ հիվանդությունից առաջացած հաշմության դեպքում:

42. Առավելագույն և կայուն կենսաթոշակների չափերն ըստ դասերի (հոդ. 36, կետ «գ» և «յե» և հոդ. 40), վորոշվում են ըստ աշխատակարգի վերջին աշխատանքի վայրի դասու:

Դաշնություն.—ԽՍՀՄ արտասահմանում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների աշխատակիցների մեջ յեղած անկարների համար վերջին աշխատանքի վայրը համարվում է այն վայրը, վորտեղ գտնվում է համապատասխան կենտրոնական իշխանությունը ԽՍՀՄ-ում:

43. Աշխատանքի վայրում խեղանդամություն առանալուց և պրոֆեսիոնալ հիվանդություններից առաջացած հաշմության կենսաթոշակը (հոդ. 38) առաջին յերեք ամբակների համար չի կարող ցածր լինել 36-րդ հոդվածի հիման վրա ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակի չափից:

44. Աշխատակարգի անաշխատունակության վիճակի մեջ փոփոխություն մտնելու դեպքում կենսաթոշակի չափը վերանայվում է՝ համապատասխան հաշմության նոր կարգի:

45. Աշխատակարգի մի վայրից մյուսը տեղափոխվելը նշանակված կենսաթոշակի չափի մեջ փոփոխություն չի մտցնում:

4-ՐԴ ԳԼՈՒԽ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

46. Ժամանակավոր անաշխատունակության շրջանում առաջացած հաշմության դեպքում կենսաթոշակը նշանակվում և ժամանակավոր անաշխատունակության նպաստի վճարումը դադարեցնելու որից, յեթե կենսաթոշակ նշանակելու մասին դիմումը ստացված և 3 ամսից վոչ ուշ:

Բայց թողնված ժամանակը վերականգնելու դեպքում (հոդ. 27) կենսաթոշակ նշանակվում և վերականգնման որից:

Մնացած բոլոր դեպքերում կենսաթոշակ նշանակվում և դիմում տալու որից:

47. Նշանակված կենսաթոշակները իր ժամանակին չպահանջելու դեպքում անցած ժամանակի համար վճարում կատարվում է վոչ ավելի, քան այդ մասին ապահովագրական դանձարկղը դիմելու օրվանից վեց ամիս հետո:

Մահանալու հետևանքով թոշակառուի կողմից չստացված կենսաթոշակի վճարման կարգը վորոշում է Միութենական Հանրապետությունների Որենսդրությամբ:

48. Հաշմության մի կարգից մյուսը փոխվելու դեպքում, կենսաթոշակը նոր չափով վճարվում է բժշկական եքսպերտ բյուրոյի կողմից վորոշում կայացնելու հետևյալ ամսից:

49. Անկարները զրկվում են կենսաթոշակից՝ ա) առանց հարգելի պատճառի 54-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված ժամկետին վերաքննմանը չներկայանալու դեպքում, կամ վոչ հարգելի պատճառով վերաքննմանը կրկնակի չներկայանալու դեպքում: բ) 3-րդ կամ բարձր կարգի պատճառով ինքնուրույն տեսակական գործունեությամբ կամ ինքնուրույն անձնական արհեստագործությամբ զբաղվելու դեպքում, այլ և շահ ստանալու նպատակով ուրիշի վարձու աշխատանքը շահագործելու դեպքում:

Գյուղացիական տնտեսության մեջ ոժանդակ վարձու աշխատանքի կիրառումը (ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1928 թ. ապրիլի 18-ին հաստատած «Գյուղացիական տնտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու պայմանների մասին ժամանակավոր կանոնների» հոդ. 1-ին—ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1925 թ. № 26, հոդ. 183 և 1927 թ. № 60, հոդ. 609), նույնպես և տնայնագործների և արհեստավորների մոտ յերկուսից վոչ ավելի աշակերտների կիրառումը չի կարող հիմք ծառայել կենսաթոշակից զրկելու համար:

50. Աշխանկարի կողմից կենսաթոշակ չստանալը, անկախ այդպիսինը չստանալու ժամկետից—չի կարող հիմք ծառայել նրան կենսաթոշակից զրկելու համար:

5-ՐԴ ԳԼՈՒԽ

ԱՇԽԱՆԿԱՐՆԵՐԻ ԴԱԴՈՒՄՆԵՐԻ ՑԵՎ ԱՅԼ ՑԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄՆ ՈՒ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

51. Ընդհանուր պատճառներից առաջացած հաշմության կենսաթոշակի վճարումը դադարեցվում է, յեթե աշխանկարն ունի դադում կամ այլ յեկամուտներ՝

ա) Գյուղական տնտեսության կազմի մեջ մտնող և գյուղական վայրերում ապրող աշխատակարները, յեթե տնտեսության յեկամուտը ըստ Ցինժողկոմատի հարկային մարմինների տվյալների գերազանցում է գյուղատնտեսական հարկով չտուրքագրվող յեկամուտի կրկնակի մինիմումից («Միասնական գյուղատնտեսական հարկի մասին» ԽՍՀՄ Կենտգործկոմի 1928 թ. ապրիլի 21-ի հաստատած կանոնների—ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1928 թ. № 24, հ. 21):

բ) Ցերկրորդ կարգի պատենտով ինքնուրույն առևտրով կամ արհեստով զբաղվող անկարներին:

52. Ի բացառյալ 51-րդ հոդվածով նախատեսված դեպքերի, ընդհանուր պատճառներից հաշմություն ստացած աշխատակարներին, վորոնք ունեն զաղում և այլ յեկամուտներ՝ կենսաթոշակ վճարվում է այն չափով, վորպեսզի կենսաթոշակի և նրա զաղումի կամ այլ յեկամուտի գումարը ընդհանուր առմամբ չգերազանցի նրա նախկին զաղումից:

53. Կոոպերատիվ միավորների մեջ մտած աշխատակարների կենսաթոշակի վճարումը զադարեցվում է այն ժամանակամիջոցի ընթացքում, վորի համար սոցահովագրական դանձարկղի կողմից վճարված է աշխատակարի փոխարեն: Հետագայում 52-րդ հոդվածի հիման վրա կատարվում է աշխատանքի անկարի յեկամուտների հաշվառում, յեթե հաշմություն առաջացել է ընդհանուր պատճառներից:

54. Սոցահովագրական դանձարկղների կամ բժշկական եքսպերտ մարմինների կողմից նշանակված վերաքննությանը առանց հարգելի պատճառի չներկայանալու դեպքում, կենսաթոշակի վճարումը դադարեցվում է: Կենսաթոշակի վճարումը նորից վերականգնվում է, յեթե թոշակառուն ներկայանում է վերաքննությանը վոչ ուշ, քան նախկին վերաքննության որից մի տարի հետո:

55. Միայնակ աշխատակարը վեց ամսից ավելի հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններում ձրիաբար մնալու դեպքում,—նրան հասնելիք կենսաթոշակի չափը սկսած 7-րդ ամսից կրճատվում է մինչև 10 ռուբլի: Հոգեկան հիվանդությունների բուժական հաստատությունից աշխատակարի դուրս գրվելու դեպքում, նրան վճարվում է կենսաթոշակի չափը կրճատելու հետևան-

քով գոյացած պակաս գումարը, բայց վոչ ավելի քան 6 ամսվա համար։ Բոլոր մնացած աշխատակարներին այդպիսի դեպքերում կենսաթոշակը—վճարվում և առանց փոխհատության։

56. Կալանքի տակ առնված միայնակ աշխատակարների կենսաթոշակի վճարումը դադարեցվում և նրա կալանավորման յերկրորդ ամսից սկսած մնացած բոլոր ժամանակի համար։ Միայնակ աշխատակարի արդարանալու կամ նրա գործը կարճվելու դեպքում կենսաթոշակ վճարվում և այն ամբողջ ժամանակամիջոցի համար, վորի ընթացքում այդպիսինը դադարեցված եր, բայց վոչ ավել վեց ամսից։

57. Ապահովագրական դանձարկղների կողմից ամբողջ ծախսով ուսումնական հաստատություններում տեղավորված աշխատակարների (հոդ. 11) ուսման ժամանակամիջոցում կենսաթոշակը չի վճարվում։ Ընտանիքավոր աշխատակարների նկատմամբ, այդպիսի դեպքերում կենսաթոշակ վճարվում և նույն չափով։

58. 55-ից—57 հոդվածների իմաստով միայնակներ հաշվում են այն աշխատակարները, վորոնք իրենց խնամքի տակ չունեն ընտանիքի անդամներ, վորոնք նեցուկը կորցնելու դեպքում յենթակա լինեին ապահովության՝ սոցիալական ապահովագրության կարգով։

59. Հաշմանդամական հիմնարկներում տեղավորված աշխատակարներին կենսաթոշակի վճարումը դադարեցվում և (հոդ. 9)։

60. ԽՍՀՄ քաղաքացի թոշակառուներին, վորոնք դուրս են գընում ԽՍՀՄ սահմաններից, հետանալիս վեց ամսվա կենսաթոշակը վճարվում և առաջ։ ԽՍՀՄ սահմաններից հետաղա բացակայության դեպքում կենսաթոշակի վճարումը դադարեցվում և։ Ռուսահպատակ քաղաքացի թոշակառուների կենսաթոշակի վճարումը շարունակվում և, յերբ նրանք գտնվում են ԽՍՀՄ սահմաններից դուրս։

61. Անկախ դադարեցման տևողությունից, կենսաթոշակի վճարումը վերականգնվում և այդպիսինի դադարեցման պատճառները վերանալու որից։

2-ՐԴ ՄԱՍ

ՆԵՑՈՒԿԸ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

1-ԻՆ ԳԼՈՒԽ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒԹՑՈՒՆՆԵՐ

62. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվելու իրավունքով ոգտվում են ընտանիքի հետևյալ անդամները.

ա) Ցերեխաները, յեղբայրները և քույրերը՝ 16 տարեկանի չհասած:

բ) Անաշխատունակ յերեխաները, յեղբայրները և քույրերը, վորոնք աշխատունակությունը կորցրել են մինչև 16 տարեկան դառնալը:

գ) Ծնողները և ամուսինը, վորոնք անաշխատունակ են, կամ հասել են—տղամարդիկ 60 տարեկան հասակի, իսկ կանայք 55 տարեկան:

դ) Ծնողներն ու ամուսինը, վորոնք չնայած աշխատունակ են, բայց զբաղված են նեցուկի 8 տարեկանի չհասած յերեխաների, յեղբայրների կամ քույրերի խնամքով:

Վորդեգրվածների կամ վորդեգիրների ապահովվելու խնդիրը վորոշում և Միութենական Հանրապետությունների Որենսդրության համաձայն:

63. Ընտանիքի նեցուկ կորցնելու դեպքում ապահովություն տրվում և հետևյալ դեպքերում՝ ա) նեցուկի մահանալու դեպքում, բ) նեցուկի անհետ կորչելու դեպքում:

Նեցուկի անհետ կորչելու դեպքում ապահովություն տրվում և պայմանով, յեթե անհետանալը հաստատված և դատարանով՝ Միութենական Հանրապետությունների Որենսդրությամբ նախատեսված կարգով:

Անհետանալը հաստատելու որը համարվում է այն որը, յերբ դատարանը վորոշում է կայացնում տվյալ անձին համարել անհետ կորած:

64. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվելու պայմաններն ու նորմաները վորոշվում են նայած նեցուկ կորցնելու պատճառներին (ընդհանուր պատճառներ, աշխատանքային խեղաղամություն, պրոֆեսիոնալ հիվանդություն) և նայած ընտանիքի անդամների թվին, ընդ վորում, յեթե անհետանալը վարձու աշխատանքի հետ է կապված՝ ապահովության նորմաներն ու պայմանները հավասարեցվում են աշխատանքային խեղանդամությունից մահանալու նորմաներին, իսկ յեթե անհետանալը կապ չունի աշխատանքի հետ, այդ դեպքում ապահովության նորմաները հավասարեցվում են ընդհանուր պատճառներից առաջացած մահացության նորմաներին:

65. Բժշկական կազմի ընտանիքի անդամները, յեթե նեցուկի մահացությունը կապված է խոյերայի համաճարակի, ջրավոր տիֆի, վորովայնային տիֆի, քութեշի, բորի, սիբիրական խոցի, մալարիայի կամ թե համաճարակային ենցիֆալիտի դեմ տարվող պայքարի հետ—ապահովվում են նույն հիմունքներով, ինչ հիմունքներով՝ աշխատանքային խեղանդամությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից նեցուկը կորցրած ընտանիքի անդամները: Նույն հիմունքներով են ապահովվում նաև անասնաբուժական կազմի ընտանիքի անդամները, յեթե նեցուկի մահը կապված է ոտի համաճարակի, կատաղության կամ սիբիրական խոցի դեմ պայքարելու աշխատանքների հետ:

66. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվության յենթակա յեն՝

ա) Վարձու աշխատանքով զբաղված անձանց ընտանիքները, վորոնք անցնում են լրիվ ապահովագրությամբ:

բ) Սոցիալական ապահովագրության կարգով ապահովվող գործազուրկների, (հոդ. 22) աշխանկարների (հոդ. 67) ընտանիքները, վորոնք անցնում են լրիվ ապահովագրությամբ:

գ) Մասնակի ապահովագրությամբ անցնող անձանց ընտանիքները, յեթե նեցուկի մահն առաջացել է աշխատանքային խեղանդամությունից կամ պրոֆեսիոնալ հիվանդությունից:

67. Սոցիալական Ապահովագրության կարգով ապահովվող (հոդ. 66, կետ «բ») անկարներին հավասարեցվում են՝

ա) Սոցիալական ապահովագրության մարմիններից կենսաթոշակ ստացող աշխատանքի հերոսները:

բ) Աշխատանքի անկարները, վորոնց կենսաթոշակի վճարումը դադարեցված է:

գ) Աշխանկարները, վորոնք իրենց նշանակված կենսաթոշակը չեն ստանում, յեթե նրանք չեն ստացել առանց ընդմիջումի մեկ տարուց ավելի կենսաթոշակը:

դ) Աշխանկարներ, վորոնք յենթակա յեն սոցիալական ապահովագրության կարգով ապահովության, բայց չեն ստանում այդ ապահովությունը, պետական այլ մարմիններից կենսաթոշակ ստանալու հետևանքով:

յե) Լուս. աշխատավորները, վորոնք ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925 թ. հունվարի 15-ի վորոշման համաձայն ապահովվում են իրենց յերկաբամյա ծառայության համար (ԽՍՀՄ Որենքների ժողովածու, 1928 թ., № 3, հդ. 32):*)

զ) Տեքստիլ արդյունաբերության ձեռնարկների բանվորները, վորոնք ապահովվում են ԽՍՀՄ Աշխժողկոմատին կից սոցիալական Ապահովագրության Միութենական Խորհրդի 1928 թ. հունվարի 5-ի № 5 վորոշման կարգով (ԽՍՀՄ Աշխժողկ. տեղ., 1928 թ. № 3):

68. Նեցուկը կորցրած ընտանիքի անդամները ապահովվում են դրամական կենսաթոշակներով: Դրամական կենսաթոշակը թոշա-

---

*) Այդ վորոշման մեջ փոփոխություններ և լրացումներ մտցվել են ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի 1925 թ. հուլիսի 17-ի (ԽՍՀՄ Աշխժողկ. տեղ. 1925 թ. № 34), և 1926 թ. մարտի 19-ի վորոշումներով (ԽՍՀՄ Աշխժողկ. տեղ. 1926 թ. № 52):

Այդ վորոշումը Ուկրաինայի և Բելոռուսիայի տերբիտորիաների վրա տարածելու կարգի մասին հրատարակված է ԽՍՀՄ Ժողկոմխորհի 1926 թ. փետրվարի 5-ի (ԽՍՀՄ. Աշխժողկ. տեղեկատու, 1926 թ. № 12) և 1927 թ. մարտի 26-ի վորոշումները (ԽՍՀՄ Աշխ-ժողկ. տեղեկատու, 1927 թ. № 19—20):

կառույի համաձայնությամբ (իսկ յեթե անչափահաս են, նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ) կարող է փոխարինվել թոշակառույին հաշմանդամական հիմնարկում տեղավորելով:

Անչափահասները, վորոնք չեն հասել 16 տարեկանի, նրանց ծնողների կամ խնամակալների համաձայնությամբ կարող են տեղավորվել Միութենական Հանրապետությունների Լուսժողկոմատների կամ Առժողկոմատների փակ հիմնարկություններում: Այդ դեպքում նեցուկը կորցրածի ընտանիքին կենսաթոշակ հաշվելիս հիշյալ հիմնարկներում տեղավորվածները հաշվի չեն առնվում:

2-րդ գլուխ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

69. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովություն տրվում է 62-րդ հոդվածում հիշված անձանց, յեթե նրանք գտնվում էին մահացածի կամ անհետ կորածի խնամքի ներքո:

Ցերկու ծնողների խնամքի տակ գտնվող յերեխաներին ապահովություն տրվում է ծնողներից վորևիցե մեկին կորցնելու դեպքում: Ընտանիքի մնացած անդամներին, վորոնք գտնվում են մի քանի անձանց խնամքի տակ, ապահովություն տրվում է միայն այն կերակրող ձեռքը կորցնելու դեպքում, վորի խնամքի տակ դերազանցապես գտնվում էին հիշյալ ընտանիքի անդամները:

70. Նեցուկը կորցնելու դեպքում ընտանիքի անաշխատունակ անդամները (62-րդ հոդվածի «բ» և «գ» կետերը) յենթակա յեն ապահովության, յեթե նրանք դասվում են հաշմության առաջին յերեք կարգերից վորևիցե մեկին (հոդ. 7):

71. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է՝

ա) Անաշխատունակ ծնողներին և ամուսնուն, յեթե նրանց անաշխատունակությունն առաջացել է նեցուկի մահանալու կամ անհետ կորչելու որից վոչ ուշ քան յերկու տարի հետո:

բ) Աշխատունակ ծնողներին և ամուսնուն, յեթե նրանք վոչ ուշ

քան նեցուկի մահանալու կամ անհետ կորչելու որը հասել են 62–րդ հոդվածի «բ» կետով հիշված հասակին (63–րդ հոդվ. 3–րդ մաս):

72. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է՝

ա) Եթե նեցուկի մահն առաջացել է աշխատանքային խեղանդամության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով՝ անկախ վարձու աշխատանքի տևողությունից:

բ) Եթե նեցուկի մահն առաջացել է ընդհանուր պատճառներից—14–րդ հոդվածով հիշված ժամկետի վարձու աշխատանքի ստաժ ունենալու դեպքում:

Նեցուկը կորցնելու դեպքում խեղանդամների ընտանիքներին (66–րդ հոդ. կետ «բ») կենսաթոշակ նշանակվում է անկախ նեցուկի աշխատանքի տևողությունից:

73. Նեցուկի մահանալու դեպքում ապահովություն տրվում է, եթե նեցուկը մահացել է՝

ա) Վարձու աշխատանք կատարելու կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստ ստանալու շրջանում.

բ) Վարձու աշխատանքի դադարեցման կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի դադարեցման որից—մի տարվա ընթացքում:

դ) Գործազրկության դեպքում ապահովություն ստանալու շրջանում (հոդ. 22–րդ):

դ) Հաշմության դեպքում ապահովություն ստանալու շրջանում (հոդ. 67):

Նեցուկի անհետ կորչելու դեպքում ապահովություն տրվում է, եթե անհետ կորչելը հաստատելու մասին միջնորդություն է հարուցված: Միջնորդություն պետք է հարուցվի ընտանիքի նեցուկի կողմից վարձու աշխատանքի աշխատավարձ, ժամանակավոր անաշխատունակության նպաստ, գործազրկության նպաստ կամ թե հաշմության կենսաթոշակ ստանալու որից վոչ ուշ քան մի տարվա ընթացքում:

74. Նեցուկը կորցնելու դեպքում ծնողներին, ամուսնուն և 16 տարեկանից բարձր անաշխատունակ երեխաներին, եղբայրներին,

քույրերին կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները պետք է տրվեն վոչ ուշ, քան նեցուկի մահանալուց կամ անհետ կորչելը հաստատելու որից յերկու տարի հետո (հոդ. 63, մաս 3-րդ)։

Հիշյալ ժամկետը բաց թողնելու դեպքում, զրկվում է սոցիալական ապահովագրության կարգով ապահովվելու իրավունքից։

75. Նեցուկը կորցնելու դեպքում փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին, քույրերին կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները կարող են տրվել մինչև նրանց 16 տարեկան դառնալը։

76. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու իրավունքը վորոշելիս համապատասխան կերպով կիրառվում են հ. հ. 14, 15, 16, 17, 18, 19, 20, 24, 25 և 27 կանոնները, վորոնք սահմանված եյին հաշմության դեպքում ապահովելու համար։

3-րդ գլուխ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՉԱՓԸ

77. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ նշանակվում է ընդհանուր՝ այն է՝ ապահովության յենթակա ընտանիքի բոլոր անդամների համար։

Ընտանիքի անդամների բաժան ապրելու դեպքում, ընտանիքի կենսաթոշակի ընդհանուր չափը, թոշակառուներից վորևիցե մեկի պահանջմամբ բաժանվում է կենսաթոշակով ոգտվող անդամների վրա։

78. Լրիվ ապահովագրության յենթակա նեցուկին կորցնելու դեպքում, յեթե մահը առաջացել է աշխատանքային խեղանդամության կամ պրոֆեսիոնալ հիվանդության հետևանքով—կենսաթոշակը նշանակվում է.

ա) ապահովման յենթակա յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի վաստակի ¾-ի չափով.

բ) ապահովման յենթակա յերկու անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի վաստակի ½-ի չափով.

գ) ապահովման յենթակա մեկ անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի վաստակի ⅓-ի չափով։

79· Ցերկու ծնողն ել կորցրած յերեխաներին (թեկուզ լինի դա տարբեր ժամանակներում) կենսաթոշակ նշանակվում է 78-րդ հոդվածով սահմանված չափերով, անկախ ծնողները կորցնելու պատճառներից: Նույն չափով կենսաթոշակ նշանակվում է նաև այն դեպքերում, յերբ ընտանիքի անդամների մեջ, բացի յերեխաներից, կան նաև ուրիշ անձինք:

80· Եթե նեցուկի մահը առաջացել է ընդհանուր պատճառներից, նրա ընտանիքին կենսաթոշակ նշանակվում է՝

ա) Յերբ նեցուկի դաղումն է ամսական 10 ռուբլուց վոչ բարձր և ընտանիքի անդամները 2 են կամ ավելի—կենսաթոշակ նշանակվում է լրիվ աշխատավարձի չափով, իսկ ընտանիքի մեկ անդամին—աշխատավարձի $^2/_3$-ի չափով:

բ) Նեցուկի դաղումը 10 ռուբլուց ավել, բայց 14 ռուբլուց վոչ բարձր լինելու դեպքում՝ յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին ամսական—լրիվ աշխատավարձի չափով, 2 հոգուց բաղկացած ընտանիքին ամսական—10 ռ. չափով, իսկ ընտանիքի մեկ անդամի ամսական—7 ռ. չափով:

գ) Նեցուկի դաղումը 14 ռուբլուց ավել, բայց 20 ռուբլուց վոչ բարձր լինելու դեպքում՝ 3 կամ ավել անձից բաղկացած ընտանիքին ամսական—14 ռ. չափով, 2 հոգուց բաղկացած ընտանիքին ամսական—10 ռ., իսկ ընտանիքի մեկ անդամին ամսական—7 ռ. չափով:

դ) Նեցուկի դաղումը 20 ռուբլուց բարձր, բայց վոչ ավել 1-ին և 2-րդ դասում ամսական 40 ռուբլուց, իսկ 3-րդ և 4-րդ դասում ամսական—30 ռուբլի լինելու դեպքում՝ յերեք կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—աշխատավարձի $^2/_3$-ը, 2 անձից բաղկացած ընտանիքին—աշխատավարձի $^1/_2$-ը, իսկ ընտանիքի մեկ անդամին—աշխատավարձի $^1/_3$-ի չափով:

յե) Ներքևում նշված սահմաններում նեցուկը դաղում ունենալու դեպքում՝

	Ամսական կենսաթոշակի չափը		
	3 կամ ավելի անձից բաղկացած ընտանիքին	2 անձից բաղկացած ընտանիքին	Ընտանիքի մեկ անդամին
1-ին և 2-րդ դասում 40 ռ. մինչև 60 ռ. դաղումի դեպք.	27 ռ.	20 ռ.	13 ռ. 50
3 րդ և 4-րդ դասում 30 ռ. մինչև 45 դաղումի դեպքում	20 ռ.	15 ռ.	10 ռ.
5-րդ և 6-րդ դասում 20 ռ. մինչև 30 ռ. դաղումի դեպքում	14 ռ.	10 ռ.	7 ռ.

81· Նեցուկը կորցնելու դեպքում, յեթե նեցուկի դաղումը գերազանցում է 1-ին և 2-րդ դասում 60 ռուբլուց, 3-րդ և 4-րդ դասում 45 ռուբլուց և 5-րդ և 6-րդ դասում 30 ռուբլուց, և յեթե նեցուկի մահը առաջացել է ընդհանուր պատճառներից, կենսաթոշակ նշանակվում է՝

ա) 3 կամ ավել անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի աշխատավարձի $^4/_9$-ի չափով·

բ) 2 անձից բաղկացած ընտանիքին—նեցուկի աշխատավարձի $^1/_3$-ի չափով·

գ) Ապահովության յենթակա ընտանիքի 1 անդամի համար—նեցուկի աշխատավարձի $^2/_9$-ի չափով:

82· Մասնակի ապահովագրությամբ անցնող նեցուկը կորցնելու դեպքում—կենսաթոշակ ամսական նշանակվում է հետեվյալ չափերով՝

	Մասնակի ապահովագրութ. 1-ին խումբ	Մասնակի ապահովագրության 2-րդ խումբ
3 կամ ավելի անձից բաղկացած ընտանիքին . . .	15 ռ.	9 ռ.
2 անձից բաղկացած ընտանիքին	10 ռ	6 ռ.
Ընտանիքի մի անդամի համար	7 ռ.	4 ռ.

83· Սոցիալական Ապահովագրությամբ ապահովվող մահացած աշխանկարի ընտանիքին կենսաթոշակ նշանակվում է, յելնելով այն դաղումից, վորի հիման վրա նշանակված եր նրան հաշմության կենսաթոշակ:

84· 79–րդ հոդվածով նախատեսված դեպքերում կենսաթոշակի չափը հաշվվում է յերկու ծնողների դաղումի հաշվով, յեթե յերկու ծնողներն էլ դասվում են այն անձանց թվին, վորոնց ընտանիքը նեցուկը կորցնելու դեպքում յենթակա յե ապահովության:

85· Նեցուկը կորցնելու հետևանքով ապահովված ընտանիքի անդամների թվի փոփոխության դեպքում, համապատասխան չափով փոփոխվում է նաև տրվող կենսաթոշակի չափը:

Կենսաթոշակը նոր չափով վճարվում է փոփոխությունն առաջանալու հետևյալ ամսի 1–ից:

86· Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակի չափը վորոշելու դեպքում համապատասխան կերպով կիրառվում է հ. հ. 28, 29, 30, 31, 33, 34, 35, 40, 43 և 45:

4–րդ գլուխ

ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՏԵՎՈՂՈՒԹՅՈՒՆԸ ՑԵՎ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

87· Այն անձինք, վորոնք նեցուկը կորցնելու որից վոչ ուշ, քան 3 ամիս հետո դիմել են կենսաթոշակ ստանալու, այդպիսինը նշանակվում է նեցուկի մահանալու կամ անհետ կորչելը հաստատվելու որից:

Բաց թողնված ժամանակը վերականգնելու դեպքում (հոդ. 27) կենսաթոշակ նշանակվում է վերականգնման օրից։ Մնացած բոլոր դեպքերում կենսաթոշակ նշանակվում է դիմում տալու օրից (հոդ. 104)։

88. Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ տրվում է՝

ա) Փոքրահասակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին (հոդ. 62, կետ «ա»), վորոնք չեն հասել 16 տարեկանի։

բ) Անաշխատունակ յերեխաներին, յեղբայրներին և քույրերին (հոդ. 62 կետ «բ»)—ցմահ կամ մինչև նրանց աշխատունակության լրիվ վերականգնումը, կամ թե մինչև աշխատունակության այն աստիճանի վերականգնումը, վորի ժամանակ ապահովություն չի տրվում (հոդ. 70)։

գ) Անաշխատունակ և ծերացած ծնողներին և ամուսնուն (հոդ. 62. կետ «բ»)—ցմահ։

դ) Յերեխային մինչև ութ տարեկան հասնելը, նրան խնամող ծնողներին և ամուսնուն (հոդ. 62, կետ «գ»)։

89. Նեցուկը կորցնելու դեպքում 88-րդ հոդվածի «ա» և «գ» կետերով նախատեսված ժամկետը անցնելուց հետո կենսաթոշակի վճարումը չարունակվում է՝

ա) Յերեխաներին, յեղբայրներին և քույրերին, յեթե նրանք մինչև 16 տարեկան հասակը անաշխատունակ են դարձել (հոդ. 70)։

բ) Ծնողներին և ամուսնուն, յեթե նրանք հասել են 82-րդ հոդվածի «գ» կետում հիշված հասակին, կամ դարձել են անաշխատունակ մինչև յերեխայի 8 տարեկան դառնալը (հոդ. 70)։

90. Նեցուկը կորցնելու դեպքում նրա ամուսնուն տրվող կենսաթոշակը դադարեցվում է, վերջինիս կողմից կրկին ամուսնանալու օրից (62-րդ հոդված կետեր «գ» և «դ»)։

91. Նեցուկը կորցնելու դեպքում ապահովվող ընտանիքի անդամների նկատմամբ համապատասխան կերպով կիրառվում են հոդ. հոդ. 47, 49 և 50։

5-րդ գլուխ

ԴԱԴՈՒՄՆԵՐԻ ՅԵՎ ԱՑԼ ՑԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՈՒՄ ՑԵՎ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

92· Ընդհանուր պատճառներից առաջացած նեցուկի մահվան դեպքում տրվող կենսաթոշակը ընտանիքի անդամներին դադարեցվում է՝

ա) 2-րդ կարգի պատենտով ինքնուրույն առևտրական գործունեություններ կամ ինքնուրույն արհեստագործությամբ զբաղվողին:

բ) Հաշմանդամական հիմնարկության կամ միութենական հանրապետությունների Լուսժողկոմատների կամ Աժժողկոմատների վակ հիմնարկություններում տեղավորվածին:

գ) Վարձու աշխատանքից վաստակ կամ այլ յեկամուտներ ու գաղում ունեցողին:

93· Նեցուկը կորցնելու դեպքում յերեխաներին տրվող կենսաթոշակը դադարեցվում է, յեթե կորցրած ծնողը մնացել է կենդանի և զբաղվում է 3-րդ կամ բարձր կարգի պատենտով առևտրական գործունեությամբ, ինքնուրույն արհեստագործությամբ կամ շահ ստանալու նպատակով ուրիշի վարձու աշխատանքից ոգտվելով:

Կենսաթոշակի վճարումը չի դադարեցվում 4-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված դեպքերում:

94· Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակ ստացող ընտանիքի անդամներից մեկին ձրիաբար հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններում տեղավորելիս՝

ա) Յեթե ընտանիքը 2 կամ ավելի անձի համար է կենսաթոշակ ստանում—կենսաթոշակը վճարվում է իր նախկին չափով:

բ) Յեթե կենսաթոշակը ընտանիքի մի անդամի համար է վճարվում—այդպիսինը կրճատվում է մինչև 10 ռ.:

Հոգեկան հիվանդությունների բուժական հաստատություններից թոշակառուի դուրս գրվելու դեպքում, նրա կենսաթոշակը կրճատվելու հետևանքով գոյացած պակասորդ գումարը վճարվում է, բայց վոչ ավելի քան 6 ամսվա համար:

95· Նեցուկը կորցնելու հետևանքով կենսաթոշակ ստացող ընտանիքի անդամին կալանքի տակ առնելու դեպքում—կենսաթոշակի վճարումը յուրաքանչյուր ամսից դադարեցվում է, կալանավորման ամբողջ ժամանակի համար:

Թոշակառուի արդարանալու կամ նրա գործը կարճվելու դեպքում—ամբողջ դադարեցված ժամանակի համար կենսաթոշակը վճարվում է, բայց ոչ ավելի 6 ամսից:

96· Ընտանիքի անդամներից վերևից մեկին կենսաթոշակի վճարումը դադարեցնելու դեպքում, ընտանիքի մյուս անդամներին վճարումը շարունակվում է սովորական չափով՝ այն և համապատասխան մնացած ընտանիքի անդամների թվին (հոդ· հոդ· 78–82):

97· Նեցուկը կորցնելու հետևանքով ապահովված ընտանիքի անդամների դաղումներն ու այլ յեկամուտները հաշվի առնելու և կենսաթոշակի վճարումը դադարեցնելու ժամանակ համապատասխան կերպով կիրառվում են 52–րդ հոդվածի կետ «ա» և 59 ու 61 հոդվածները:

3-ՐԴ ՄԱՍ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՎՃԱՐԵԼՈՒ ՅԵՎ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1-ին գլուխ

ԴԻՄՈՒՄ ԿԵՆՍԱԹՈՇԱԿ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

98· Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումները ստացվում են և ընթացք են տրվում յերկրային կամ տրանսպորտային ապահովագրական գանձարկղների կողմից՝ նայած աշխանկարի կամ ընտանիքի նեցուկի վերջին աշխատանքի վայրին։

99· Կենսաթոշակ նշանակելու մասին դիմումը տրվում է թոշակի համար դիմող անձի բնակավայրի Սոցապգանձարկղին կամ սոցապկայանին։

Կենսաթոշակ նշանակելու մասին միջնորդությունը կարող է հարուցվել թե գրավոր և թե բանավոր ձևով։

100· Հաշմության համար կենսաթոշակ ստանալու մասին դիմող անձնավորությունը պետք է ներկայացնի՝

ա) Փաստաթղթեր, վորոնք կհաստատեն՝ 1) պահանջվող վարձու աշխատանքի ստաժը և 2) հոդ. հոդ. 28, 29 կամ 33-ում հիշված ժամանակամիջոցում ունեցած դադարի մասին (հաշվեղրքույկներ, տեղեկանքներ աշխատանքի վայրից և այլն)։

բ) Ծննդյան վկայական, յեթե հաշմությունը առաջացել է ընդհանուր պատճառներից։

գ) Արձանագրություն (կամ այլ պաշտոնական վկայական) դժբախտ պատահարի մասին, յեթե հաշմությունը առաջացել է աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով։

101· Նեցուկը կորցնելու դեպքում կենսաթոշակ ստանալու համար դիմող անձնավորությունը պետք է ներկայացնի՝

ա) Փաստաթղթեր, վորոնք պետք է հաստատեն 1) նեցուկի վարձու աշխատանքով զբաղված լինելու աշխատանքի ստաժը և

2) 28, 29 կամ 33-րդ հոդվածներով հիշված ժամանակամիջոցի համար նեցուկի դադարը (հաշվեգրքույկներ և տեղեկանքներ աշխատանքի վայրից):

բ) Նեցուկի տարիքը հաստատող վկայական, յեթե նեցուկի մահը առաջացել է ընդհանուր պատճառներից:

գ) Քաղաքացիական Կացության Ակտերից (ՔԱԿՍ) քաղված ընտանիքի նեցուկի մահվան մասին կամ դատարանի վորոշումը նեցուկի անհետ կորչելու մասին:

դ) Վկայականներ կենսաթոշակի համար դիմողների տարիքի մասին և նրանց նեցուկի հետ ունեցած ազգակցական կապի մասին:

յե) Վկայականներ այն մասին, վոր կենսաթոշակի համար դիմող ընտանիքի անդամները դանվելիս են յեղել նեցուկի խնամքի ներքո:

զ) Արձանագրություն (կամ այլ պաշտոնական փաստաթուղթ) դժբախտ պատահարի մասին, յեթե նեցուկի մահացությունը առաջացել է աշխատանքի վայրում խեղանդամություն ստանալու հետևանքով:

102. Սոցիալական Ապահովագրության գանձարկղն անկախ նրանից, թե պահանջվող փաստաթղթերը ներկայացված են թե վոչ, պարտավոր են կենսաթոշակի մասին դիմումը ընդունել: Պակասող փաստաթղթերը լրացնելու համար սահմանվում է դիմում տալու որից 6 ամսյա ժամկետ:

103. Սոցապգանձարկղը դիմողին տալիս է ստացական դիմումն ընդունելու մասին՝ նշելով նաև դիմումն ընդունելու ժամանակը:

104. Կենսաթոշակի համար դիմելու որը հաշվվում է տեղական սոցապգանձարկղին դիմում տալու որը, իսկ փոստով ուղարկելու դեպքում, ուղարկման վայրի փոստային կնիքի նշված որը:

2-րդ գլուխ

ԲԺՇԿԱԿԱՆ ԵՔՍՊԵՐՏ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

105· Այն անձինք, վորոնք դիմում են կենսաթոշակ ստանալու և վորոնց կենսաթոշակի իրավունքը կախված է հաշմության սահմանելու խնդրի հետ—այդպիսիները սոցապդանձարկղի կողմից ուղարկվում են բժշկական եքսպերտ մարմիններին:

Բժշկական եքսպերտ մարմիններին ուղարկելը կատարվում է միայն այն դեպքում, յեթե կենսաթոշակ նշանակելու համար մնացած բոլոր նախադրյալները կան:

106· Հաշմության կարգի վորոշումը կատարվում է բժշկական եքսպերտ բյուրոների կողմից, իսկ այն վայրերում, վորտեղ այդպիսիներ չկան՝ Բժշկական Վերստուգիչ Հանձնաժողովների կողմից—Եքսպերտ բյուրոյի հաստատմամբ: Վերջին դեպքում Բժշկական վերստուգիչ հանձնաժողովի արձանագրությունը ուղարկվում է բժշկական եքսպերտ բյուրոյին, վորը իրավատու յե կատարել նոր քննություն:

107· Թոշակառուների բժշկական վերաքննությունը կատարվում է ինչպես սոցապդանձարկղների վորոշմամբ, նույնպես և իրենց թոշակառուների պահանջմամբ, բայց վոչ ավելի քան տարին մեկ անգամ: Թոշակառուի առողջության մեջ կարուկ փոփոխություն նկատվելու դեպքում իրեն թոշակառուի պահանջմամբ Սոցապդանձարկղը կարող է դեռևս տարին չլրացած նրան ուղարկել բժշկական վերաքննության:

Վերոհիշյալը չի տարածվում բժշկական այն վերաքննության վրա, վորը նշանակվում է բժշկական եքսպերտ մարմինների կողմից և վորոնց գործունեության կարգը վորոշվում է Միութենական Հանրապետությունների Առժողկոմատների կողմից՝ համաձայնեցնելով Միութենական Հանրապետությունների Աշխժողկոմատներին կից Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների հետ:

108· Նշանակված ժամկետին բժշկական քննության ներկայանալը պարտադիր է, ի բացառյալ այն բժշկական վերաքննությունների, վորին թոշակառուն ուղարկված է իր պահանջմամբ:

Թոշակառուի վերաքննություն նշանակելու մասին արվում է կենսաթոշակի դրքույկի մեջ համապատասխան նշանառում:

109. Այն անձինք, որոնք կանչված են բժշկական եքսպերտ բյուրո բժշկական քննության կամ վերաքննության՝ իրենց բնակավայրից դուրս գտնվող եքսպերտ մարմինների կամ սոցապդանձարկղների որոշմամբ, փոխադրության հետ կապված ծախսերը այդպիսիներին հատուցվում է: Հատուցման չափն ու կարգը սահմանվում է Սոցապդանձարկղների կոմիտեների կողմից:

3-րդ գլուխ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՍՏԱԺԸ ՎՈՐՈՇՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐ

110. Փաստաթղթերով չհաստատված աշխատանքի ստաժը վորոշելու համար սոցապդանձարկղներին կից կազմակերպվում են աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովներ:

111. Ցերկրային սպահովագրական դանձարկղներին կից աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ կազմով՝ սպահովագրական դանձարկղի կոմիտեի անդամից (հանձնաժողովի նախագահ), տեղական աշխատանքի բաժնի (կամ Աշխատանքի համապատասխան մարմնի) մեկ ներկայացուցիչ և տեղական Միջմիութենական կազմակերպությունից մեկ ներկայացուցիչ:

Տրանսպորտային սպահովագրական դանձարկղներին կից հիշյալ հանձնաժողովները կազմակերպվում են հետևյալ կազմով՝ սպահովագրական դանձարկղի կոմիտեի անդամից (հանձնաժողովի նախագահ), ճանապարհային հաղորդակցության աշխատեցից և յերկաթգծի արհմիության կամ Զրայինների շրջկոմի մեկ ներկայացուցիչ՝ ըստ պատկանելության:

112. Աշխատանքի ստաժ ունենալու խնդիրը հանձնաժողովի քննության հանձնվելու դեպքում, կենսաթոշակի համար դիմող անձնավորությունը պետք է ցույց տա այն անձանց անունը, ազգանունը, հայրանունը և հասցեն, որոնք իրենց վկայությամբ կարող են հաստատել նրա վարձու աշխատանք տանելը և ստաժի տևողությունը:

113· Սոցապդանձարկղը գործերը հանձնում և հանձնաժողովին դիմումն ստանալու օրից—յերեք օրվա ընթացքում։

Գործը հանձնաժողովին ուղարկելու մասին տեղեկացնում և դիմողին։

114· Հանձնաժողովն իրեն ուղարկված գործը քննության և առնում ստանալու օրից մի շաբաթվա ընթացքում։

115· Հանձնաժողովը ծանուցագրերով կանչում և դիմողին և դիմումի մեջ հիշված վկաներին՝ անձամբ նրանց ցուցմունքները լսելու համար։

Դիմողին իրավունք և տրվում վկաներին իրեն հետ բերել։ Դիմողի հավատարմատարներին կամ այլ ներկայացուցիչներին թույլատրվում և դալ ցուցմունքներ տալու միայն այն դեպքում, յեթե դիմողը փոքրահասակ և (մինչև 16 տարեկան) կամ ֆիզիքական պակասության (խուլ, համր և այլն) և հոգեկան հիվանդության հետևանքով չի կարող ցուցմունքներ տալ։

116· Յեթե վկաներից վորևիցն մեկն ապրում և տվյալ դանձարկղի գործունեության շրջաններից դուրս, սոցապդանձարկղը այդ վկայի հարցաքննությունը հանձնարարում և վկայի բնակավայրի դանձարկղին։

117· Հանձնաժողովի հարցաքննությանը կանչվելու հետ կապված ծախքերը, վորոնք կրում են դիմողը և վկաները սոցիալական ապահովագրության մարմինների կողմից չեն հատուցվում։

118· Հանձնաժողովին տրվում և իրավունք վկաների ցուցմունքներն անձամբ, նրանց կողմից լսելու համար նրանց չկանչել, այլ բավականանալ նրանց գրավոր ցուցմունքների քննությամբ՝ պայմանով, յեթե վկաների ստորագրությունները սահմանված կարգով վավերացված են։

119· Գործի քննության ժամանակ հանձնաժողովը կարող և դեկավարվել վկաների ցուցմունքների հետ միաժամանակ նաև պրոֆիլության անդամատոմսում յեղած նշանակումներով։

120· Հանձնաժողովի կողմից քննության առնված ամեն մի գործի համար հենց նույն նիստում կազմվում և արձանագրություն։ Արձանագրությունն իր մեջ պետք և պարունակի նիստի

տեղի և ժամանակի նշանակումները, այլ և այն սոցիալական անունը, որին կից և հանձնաժողովը, դիմողի անունը, հայրանունը և ազգանունը՝ ցույց տալով նրա տարիքը, ծագումը, պրոֆեսիան (պաշտոնը): Արձանագրության մեջ պետք է լինի դիմողի ստորագրված ցուցմունքները, վկաների անունը, ազգանունը և հայրանունը, նրանց տարիքը և սոցիալական դրությունը՝ նշելով միաժամանակ, թե ազգակից չէ դիմողին, վկաների ստորագրված ցուցմունքները և վերջապես հանձնաժողովի վորոշումը (հդ. 121):

Հանձնաժողովի արձանագրությունը ստորագրվում է հանձնաժողովի նախագահի և բոլոր անդամների կողմից: Առանձին կարծիքի մնացած հանձնաժողովի անդամին տրվում է իրավունք պահանջելու մտցնել իր կարծիքն արձանագրության մեջ:

121. Հանձնաժողովի վորոշման մեջ պետք է նշված լինեն դիմողի կամ ընտանիքի նեցուկի աշխատանքի ստաժի վերաբերյալ ստացված փաստերը ճշտությամբ և մանրամասն ցույց տալով թե՝

ա) վո՞ր հիմնարկ ձեռնարկներում (կամ վոր մասնավոր անձի մոտ) է աշխատել դիմողը կամ դիմողի մահացած կամ թե անհետ կորած նեցուկը:

բ) վո՞ր ժամանակից մինչև վոր ժամանակն է դիմողն աշխատել յուրաքանչյուր հիմնարկում կամ ձեռնարկում (կամ մասնավոր անձի մոտ):

գ) ինչ պաշտոնում էր գտնվում դիմողը և ինչ բնույթի աշխատանք էր կատարում,

դ) դիմողի պահանջմամբ նրան պետք է տրվի հանձնաժողովի վորոշման պատճենը:

122. Հանձնաժողովը վորոշում կայացնում է հենց գործը քննության առնելու որը և վորոշման մասին տեղեկացնում է դիմողին, վերցնելով նրանից ստորագրություն: Դիմողի պահանջմամբ նրան պետք է տրվի հանձնաժողովի վորոշման պատճենը:

123. Հանձնաժողովի արձանագրությունը գործի հետ միասին հանձնվում է ապահովագրական գանձարկղին:

124. Եթե ապահովագրական գանձարկղը կգտնի, վոր հանձնաժողովը հաշվի չի առել տվյալ գործին վերաբերող բոլոր հանգա-

մանքները, դանձարկղը հարցը վորոշում է ըստ էության, կամ թե գործն ուղարկում է հանձնաժողովին նորից քննության առնելու համար:

125. Աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժողովի նախագահը յերբ համաձայն չի լինում հանձնաժողովի վորոշման հետ, կամ բուժիցկոդն նմա՝ գ բուհիմոժանամ նիշրնակ վնարին ձրառնանի նմա հարցի վերջնական լուծումը պատկանում է սոցահովագրական դանձարկղին:

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

4-րդ գլուխ

126. Կենսաթոշակ նշանակելու մասին գործերը տանում են այն յերկրային դանձարկղները, վորոնց տրված են կենսաթոշակ նշանակելու իրավունքը սոցապմարմինների մասին Միության Հանրապետությունների Աշխատողների Սոցիալական Ապահովագրության Խորհուրդների կողմից հաստատված կանոնադրությամբ: Տրանսպորտում կենսաթոշակ նշանակելու գործերը տանում են շրջանային սոցահովագրական դանձարկղները:

127. Կենսաթոշակ նշանակվում է սոցահովագրական դանձարկղի կոմիտեի այն անդամի կողմից, վորը լիազորված է այդ անելու դանձարկղի կոմիտեի վորոշմամբ:

128. Եթե սոցահովագրական դանձարկղի կոմիտեի անդամը (հոդ. 127) չի գտնում հնարավոր կենսաթոշակ նշանակելու, գործը հանձնվում է կենսաթոշակային հանձնաժողովի քննությանը:

Կենսաթոշակային հանձնաժողովները կազմված են սոցահովագրական դանձարկղի մեկ ներկայացուցչից (հանձնաժողովի նախագահ), աշխատանքի բաժնի (կամ նրան համապատասխան Աշխատողների մարմնի) մեկ ներկայացուցչից և Միջմիությունական կազմակերպության (տրանսպորտում համապատասխան պրոֆմիության) մեկ ներկայացուցչից:

129. Կենսթոշակ նշանակելու մասին վորոշումը պետք է կայացվի սոցահովագրական դանձարկղում բոլոր անհրաժեշտ նյութերը (փաստաթղթեր, աշխատանքի ստաժը վորոշող հանձնաժո-

գովի արձանագրություն, բժշկական եքսպերտ հանձնաժողովի արձանագրություն) ստանալու որից—յերկու շաբաթվա ընթացքում:

130. Կենսաթոշակ նշանակելու համար տվյալները պակասելու դեպքում ապահովագրական դանձարկղը առաջարկում և դիմողին ներկայացնելու պակասող փաստաթղթերն ու տեղեկությունները:

Ապահովագրական դանձարկղը կարող և պահանջել անհրաժեշտ փաստաթղթեր և տեղեկություններ անմիջականորեն համապատասխան ձեռնարկություններից, հիմնարկություններից, կազմակերպություններից և անձնավորություններից: Սոցիալական ապահովագրության մարմիններից անհրաժեշտ տեղեկանքները բոլոր դեպքերում ել պահանջվում են սոցապդանձարկղների կողմից:

131. Կենսաթոշակ նշանակելիս ապահովագրական դանձարկղը դեկավարվում և վոչ միայն դիմումի մեջ հիշված տվյալներով, այլ և բոլոր այն հանգամանքներով, վորոնք դոյություն ունեն կենսաթոշակի գործում, ընդ վորում կենսաթոշակ կարող և նշանակվել վոչ այն հիման վրա, վորի մասին գրում և դիմողը:

Յեթե գործում կան մի շարք հիմունքներ, կենսաթոշակ նշանակելու համար (հաշմություն, նեցուկը կորցնելը և այլն)—ընտրությունը թողնվում և դիմողին:

132. Ապահովագրական դանձարկղի վորոշման մասին դիմողին տեղեկացնում են վորոշում կայացնելու որից— 3 որվա ընթացքում: Կայացված վորոշման մասին տեղեկությունն իր մեջ պետք և պարունակի վորոշումը բողոքարկելու կարգի և ժամկետի մասին տվյալներ, իսկ մերժման դեպքում, նաև մերժելու պատճառները:

133. Նոր հայտնաբերված հանգամանքների հետևանքով գործը վերանայելու ժամանակ, ապահովագրական դանձարկղը կայացնում և հիմնավորված վորոշում, վորի մեջ նա նշում և այն հանգամանքները, վորոնք հիմք ծառայեցին գործը վերանայելու համար: Վորոշումը հայտնվում և թոշակառուին 132-րդ հոդվածով սահմանված կարգով:

134. Կենսաթոշակ նշանակելու դեպքում դիմողի ներկայացրած փաստաթղթերը վերադարձվում են իրենց միայն բողո-

քարկման ժամկետը (հոդ. 139) անցնելուց հետո, իսկ բողոք տըրվելու դեպքում, դործի վերջնական լուծումից հետո։ Ամեն մի վերադարձվող փաստաթղթի վրա դրվում է ապահովագրական գանձարկղի շտամպը։

135. Կենսաթոշակ նշանակելու մասին դործերը կարճվում են յերբ՝

ա) 6-ամսյա ժամկետում չի ներկայացվում պակասող փաստաթղթերը (հոդ. 102)։

բ) հրաժարվում է յենթակրվել մասնագիտական բուժման կամ հետազոտման ի բացառյալ վիրաբուժական վիրահատությունից։

գ) վոչ հարգելի պատճառով սահմանված ժամանակի և 2 ամիս անց այդ ժամկետից բժշկական եքսպերտ մարմինների վերաքննությանը չի ներկայանում։

Կարճված դործերի ուժը կարող են վերականդնել, յերբ նորից դիմում են ապահովագրական գանձարկղ կենսաթոշակ նշանակելու՝ պահպանելով սահմանված ժամկետները (հոդ. հոդ. 26, 74 և 75)։

5-ՐԴ ԳԼՈՒԽ
ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԿՂՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ

136. Կենսաթոշակ նշանակելու մասին ապահովագրական գանձարկղների վորոշումները կարող են բողոքարկվել հետևյալ վերադաս սոցիալական ապահովագրության մարմնին, վորի վորոշումը համարվում է վերջնական։

Միութենական Հանրապետությունների Աշխատողական Դլխավոր տնվարչություններին անմիջականորեն յենթակա ապահովագրական գանձարկղների վորոշումները բողոքարկման յենթակա չեն։

137. 133-րդ հոդվածով սահմանված կարգով բողոքներ կարող են տրվել ինչպես կենսաթոշակ նշանակելու մասին ապահովագրական գանձարկղների վորոշումների վրա, նույնպես և կենսաթոշակի վճարումը դադարեցնելու կամ ժամանակավորապես կանգնեցնելու, կենսաթոշակի չափը պակասեցնելու, կամ թե ապահովման մի տե-

ոակից մյուսին փոխադրելու մասին վորոշումների վրա։ Նույն կարգով բողոքներ տրվում են նաև բժշկական մարմինների վրա։

138. Բողոքը տրվում է կենսաթոշակի մասին վորոշում կայացրած ապահովագրական դանձարկղի միջոցով։ Բողոքը ընդունող ապահովագրական մարմինը բողոքի վրա գնում է ստանալու ամիսը և ամսաթիվը ու տալիս է դիմողին ստացական՝ բողոքի և նրան կցված փաստաթղթերի ստացման մասին։

139. Բողոքներ տրվում են ապահովագրական դանձարկղի վորոշման մասին դիմողին տեղեկացնելու որից—3 ամսվա ընթացքում (հոդ. 132)։

140. Բողոք տալու որը համարվում է ապահովագրական դանձարկղին բողոքը հանձնելու որը, իսկ փոստով ուղարկելու դեպքում—փոստային շտամպի վրա դրված որը։

141. Ապահովագրական դանձարկղը ստանալով բողոքը, այդ-պիսինը կենսաթոշակի գործի և իր յեղրակացության հետ 7 որվա ընթացքում ուղարկում է վերադաս մարմնին։ Ապահովագրական դանձարկղի մասնաճյուղը պարտավոր է ապահովագրական դանձարկղն ուղարկել իրեն մոտ ստացված բողոքը վոչ ուշ քան հետևյալ որը։

142. Բողոքարկման համար սահմանված 3-ամսյա ժամկետից ուշ ստացված բողոքները ապահովագրական դանձարկղի կողմից վերադարձվում են դիմողին՝ նշելով վերադարձնելու պատճառները։

Ժամկետը բաց թողնելու պատճառները հարգելի լինելու դեպքում, ապահովագրական դանձարկղը բողոքողի խնդրի համաձայն, կարող է այդ ժամկետը վերականգնել։

Ապահովագրական դանձարկղի վորոշումը՝ ժամկետը վերականգնելու մասին, համարվում է վերջնական և բողոքարկման վոչ յենթակա։

143. Վերադաս սոցիալական ապահովագրության մարմինը բողոքարկված գործը քննում է ըստ էության, ընդ վորում նա վորոշում հանում է անկախ բողոքի մեջ հիշված հիմունքներից։

144. Վերադաս սոցիալական ապահովագրության մարմինը գործը քննելուց հետո ապահովագրական գանձարկղին և ուղարկում կենսաթոշակի գործն իր կայացրած վորոշման հետ միասին,

Վորոշման պատճենն ուղարկվում և բողոքողին:

6-ՐԴ ԳԼՈՒԽ

ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՐԳՈՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ

145. Միութենական Հանրապետությունների Աշխատողների Գլխավոր վարչություններին իրավունք և տրվում կենսաթոշակ նշանակելու մասին գործերի ստիպիվ ապահովագրական գանձարկղների կայացրած վորոշումները հսկողության կարգով վերանայելու: ԽՍՀՄ Աշխատողների Կենտրոնական վարչությանը նույն իրավունքն և տրվում թե Գլխավոր վարչությունների և թե ապահովագրական գանձարկղների նկատմամբ:

146. ԽՍՀՄ Աշխատողների Կենտրոնական վարչության կողմից հսկողության կարգով ապահովագրական գանձարկղների կենսաթոշակ նշանակելու մասին վորոշումների վերանայումը կատարվում և համապատասխան միութենական Հանրապետության Աշխատողների Գլխավոր վարչության յեզրակացությունն ստանալուց հետո:

147. Հսկողության կարգով ապահովագրական գանձարկղի կամ Միութենական Հանրապետության Աշխատողների Գլխավոր վարչության վորոշումը փոփոխելու դեպքում, գործն ուղարկվում և վորոշում կայացրած սոցիալական ապահովագրության մարմնին՝ նոր վորոշում կայացնելու համար: Այս դեպքում հսկողության կարգով գործը վերանայող մարմնի ցուցումները համարվում են պարտավորեցուցիչ:

148. Հսկողության կարգով սոցիալական ապահովագրության մարմնի վորոշումը փոխելու իրավունքը ժամկետով չի սահմանափակված:

7-ՐԴ ԳԼՈՒԽ

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

149. Կենսաթոշակ նշանակելու դեպքում ապահովագրական գանձարկղը դուրս և գրում կենսաթոշակի գրքույկ, որը սոցապ-գրությամբ հանձնվում է թոշակառուին:

150. Կենսաթոշակը վճարվում է ամեն ամիս՝ ապահովագրական գանձարկղի սահմանված ժամկետներին:

151. Անգործունակ անձանց հասանելիք կենսաթոշակը վճարվում է նրանց խնամակալներին, որոնք ներկայացնում են իրենց խնամակալությունը հաստատող փաստաթուղթ:

152. Կենսաթոշակի վճարումը կատարվում է թե ապահովագրական գանձարկղի կողմից անմիջականորեն և թե փոստի կամ խնայողական գրամարկղների միջոցով:

Արտասահմանում բնակվող թոշակառուների (հոդ. 60, մաս 2-րդ) կենսաթոշակը փոխադրվում է ԽՍՀՄ հյուպատոսությունների միջոցով ըստ թոշակառուի հայտարարության:

153. Կենսաթոշակը վճարելու և փոխադրելու հետ կապված ծախսերը բոլոր դեպքերում էլ կատարվում են ապահովագրական գանձարկղների հաշվին:

154. Ընտանիքի անդամների կազմի մեջ փոփոխություն տեղի ունենալու դեպքում, որը ազդելու յե կենսաթոշակի չափի վրա, կենսաթոշակը վճարող սոցիալական ապահովագր. մարմինը հետ է վերցնում թոշակի գրքույկը և այդպիսինը տեղեկանքի հետ միասին ուղարկում ապահովագրական գանձարկղ՝ կենսաթոշակի չափը վերանայելու համար:

155. Թոշակի գրքույկը կորցնելու դեպքում թոշակառուն պարտավոր է այդ մասին անհապաղ հայտնել այն սոցապմարմնին, որտեղից ստանում է կենսաթոշակ և իր հաշվին տեղական թերթում տալ հայտարարություն: Թոշակառուն պարտավոր է հիշյալ ապագանձարկղին ներկայացնել թերթին տրված հայտարարության անդորրագիրը: Կորցրածի փոխարեն տրված թոշակի նոր գրքույկի վրա դրվում է շտամպ «դուբլիկատ»:

156. Կենսաթոշակի վճարումը կանգնեցնելու կամ դադարեցնելու դեպքում, թոշակառուից հետ է վերցվում թոշակի գրքույկը:

157. Թոշակի գրքույկը հետ վերցնելու դեպքում (հոդ. հոդ. 154 և 156) թոշակառուին տրվում է համապատասխան անդորրագիր:

158. Նոր բնակավայր տեղափոխվելիս թոշակառուն պետք է այդ մասին հայտնի այն ապահովագրական դանձարկղին, որտեղից նա կենսաթոշակ է ստանում:

Ապահովագրական դանձարկղը փակում է տեղափոխվող թոշակառուի անձնական հաշիվը և ուղարկում է այդպիսինը թոշակառուի նոր բնակավայրի ապահովագրական դանձարկղին, միաժամանակ հայտնելով, թե մինչև որ ժամանակն է նրա հաշիվները փակված և չունի արդյո՞ք նա ապադանձարկղին պարտք:

159. Թոշակառուի նախկին բնակավայրի—ապահովագրական դանձարկղի վերոշումը կենսաթոշակը նշանակելու մասին, պարտավորեցուցիչ է նոր բնակավայրի ապահովագրական դանձարկղի համար:

Սխալ կենսաթոշակի նշանակում յերևան հանելու դեպքում ապահովագրական դանձարկղը Միութենական Հանրապետության Գլխավոր ապվարչության առաջ հարց է հարուցում հսկողության կարգով գործը վերանայելու համար, բայց մինչև վերանայումը չդադարեցնելով կենսաթոշակի վճարումը:

Սոցիալական Ապահովագրության Միութենական
Խորհրդի Նախագահ՝ ՆԵՄՉԵՆԿՈ

Պատ. քարտուղար՝ ԿՈՒՉՈՒՏԻՆ

ՀԱՎԵԼՎԱԾ

Սոցիալական ապահովագրության կարգով հաշմության և նեցուկը կորցնելու դեպքում ապահովելու «կանոնների» 5-րդ հոդվածի։

ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

Պրոֆ. հիվանդության անունները	Արտադրության ճյուղերը, որոնցում հանդիպում է հիվանդությունը	Այն արտադրությունների, պրոֆեսիաների և աշխատանքների անունները, որոնք կապված են պրոֆ. հիվանդության վտանգի հետ։	Ինչպես տեղեկանալ հիվանդության մասին։ Հաշմ. ֆունկցիայի հիմքերը։ Ինչպես ապահովել նեցուկը։ Ինչպես հաշվել հաշմ. դեպքում նպաստի չափը։ Ինչպես ապահովել նեցուկը։ Ինչպես հաշվել հաշմ. դեպքում նպաստի չափը։
Արճիճային մկանացավ (միալգիա) Արճիճային պարալիչ Գանդուղեղի արճիճային տեվական դում Արճիճային հյուծություն (կոխեկսիա) Արճիճային յերեկամաբորը (կնճռոտ յերիկամունք) (նեֆրիտ)	Ա. Ս. Ա. Ի. Ա. Ա. Ի. Ա.	1. Կապարի և ցինկի հանքերի արտադրություն։ 2. Կապարի հալումը, թափումը և պրոկատկա։ 3. Կապարային ինդիգոյի, սուրիկի, դալեսի խրոմաթթվային կապարի, կապարային շաքարի և այլ կապարային միացումների արտադրություն։ 4. Կապար պարունակող ներկերի պատրաստում։ 5. Ամեն տեսակի ներկաբարական աշխատանքներ, որի ժամանակ գործածվում են կապարային ներկեր։ 6. Կղմինդրի արտադրության մեջ կապարային միացումների գործադրություն։ 7. Կապարի հոլույթով կլեկեն ուլիրաբ կպցնելը։ 8. Գոլիդրաֆիկակ արտադրություն (գրաշարներ, տպագրիչներ, ստերեոտիպողներ, տառաձուլողներ և ձայնանիշ փորագրողներ։ 9. Մետաղները կապարային շերտով ծածկելու աշխատանքներ. կապարային ավազաններում կուլիումը։ 10. Կապարային ելեքտրակուտիչների պատրաստումը. 11. Բորակեռի արտադրություն։ 12. Կապարային հիմքի վրա խարտոցների պատրաստում։	1. Ս. Ա. Ի.

Պրոֆ. հիվանդության անունները	Արտադրամասերի աշխատանքների հիմնական բնույթը	Այն արտադրությունների, պրոֆեսիաների և աշխատանքների անունները, որոնք կապված են պրոֆ հիվանդության վտանգի հետ:	Հաշվի կամ գրանցման համար հանձնարարված անձանց թիվը
		13. Մանրագնդակի (սաչմայի) արտադրություն: 14. Կապարային խողովակների արտադրություն:	
		15. Ցերաժշտական գործիքների արտադրություն. 16. Կապարային հալույթից անակային ամանեղենի արտադրություն. 17. Կապարի հալույթից խաղալիքների պատրաստումը:	
Սնդիկի դողոց Սնդիկի հյուծություն (կախեկսիա) Սնդիկային լուծանք (պարալիչներ) Սնդիկի պիլոդներ	Ս Ա Ր Ի Ա Ն	1. Սնդիկի արտադրումը հանքից (ձուլարաններ): 2 Դիլարկի արտադրություն: 3. Ջերմաչափների, ծանրաչափների և այլ ֆիզիքական գործիքների արտադրություն: 4. Սնդիկային քիմիական պրեպարատների արտադրություն: 5. Ելեքտրական լամպերի և ռենտգենյան խողովակների արտադրություն: 6 Շառաչող սնդիկի և ճատրուկի լեցքի արտադրություն: 7. Վռակեչրում կրակի վրա: 8. Ամալգամի արտադրություն (ատամի պլոմբի համար): 9. Սնդիկային պրեպարատները մշտապես լվանալով զբաղվող բժշկական պերսոնալը:	Ֆ Ա Ս Ա Ռ
Վռակների ֆոսֆորային վնասվածքներ	1 տարի	1. Ֆոսֆորի արտադրություն 2. Լուցկու արտադրություն	
Կեսոնի հիվանդութ.	—	Ջրասույզ և կեսոնային աշխատանքներ:	—

Պրոֆ. հիվանդության անունները	Արտադրության ընթացքում ստացած աշխատանքի տևողությունը, ամսաթվերով	Այն արտադրությունների, պրոֆեսիաների և աշխատանքների անունները, որոնք կապված են պրոֆ հիվանդության վտանգի հետ։	Հիշատակություն. Ցույց տալ, թե արդյոք դեպքերը կապված են աշխատանքի հետ կամ չեն։ Դեպքերը, որոնք կապված են ամիսներ տևող աշխատանքի հետ, ավելացնել։ Տարբերություն դնել ինֆեկցիոն հիվանդությունների միջև։
Նիստագմ	½ տարի	Լեռնագործ բանվորներ։	Անմիջականորեն աշխատանքի հետ կապված
Ծանր արյունատության ֆճիճուի հիվանդ.	—	Լեռնագործ բանվորներ։	—
Հոտանչային պարկերի, ծնկի, և արմունկի, ճտճանչոսկրային հոդի ու ջրաբանոցների խորշանյութի խրոնիկական բորբոքում	1 տարի	Սևագործ բանվորներ, քարտաշներ, տանիք ծածկողներ, սալտատակողներ, և այն անձինք, որոնց աշխատանքը կապ ունի հոդային պարկերի և ջրաբանոցների խորշանյութի վրա ուժեղ ճնշում գործ դնելու հետ։	Անմիջականորեն աշխատանքի հետ կապված
Խլություն	3 տարի	Ջուլհակներ, կլեպալշչիկի, դերժալշչիկներ, մուրճ խփողներ, զագիբշչիկներ, մեխ պատրաստողներ, կոսարնի գործարանի բանվորներ, ռադիոհեռագրիչներ։	Անմիջականորեն աշխատանքի հետ կապված
Սև ջուր (լուսան) հիվանդություն.	5 տարի	Ջուլարաններում աշխատողներ, ապակի փչողներ, հալողներ, յեփողներ, շիկացնողներ, վառարանի բանվորներ, ելեքտրական կվարցի, անդիկի և ացետիլենովի լամպի փորձելու վրա աշխատող բանվորներ։	—
Յանցինու բորբոքում	7 որ	Նույնը։	Անմիջականորեն աշխատանքի հետ կապված

Պրոֆ. հիվանդության անունները	Արատեր. մեր ամբողջ կեանքի ընթացքում հանդիպող պրոֆեսիոնալ հիվանդություններ։	Այն արտ. դրութիւնների, պրոֆեսիաների և աշխատանքների անունները, որոնք կապված են պրոֆ. հիվանդության վտանգի հետ։	Հարմար մեր կարծիքով, ինչպես նաև ամենամեծ երկրի և նրանի մեջ մարդուն ենթարկուած հիվանդությունները։
Պրոֆեսիոնալ ստնդանք (սպաղմ) ծայրանդամների պրոֆեսիոնալ դող	14 որ	Գրագիրներ, հեռագրիչներ, գծագրողներ, ձայնանիշ փոբագրողներ, վերանկարողներ, տուշով նկարողներ, պատճենողներ, սղագրողներ, կալիգրավշիկներ, կարողներ, ձեռագործ անողներ, սիգարագործներ, ծաղկագործներ, մեքենագրուհիներ, տակառներ, մետաղ և փայտ կարողներ, թուղթ դասավորողներ (թղթի գործարաններում) ժամագործներ, բալետի աշխատողներ, յերաժիշտներ (դաշնակահար և ջութակահար)։	Անմիջականորեն աշխատանքի հետ կապված
Հյուսվածքների ծանր վնասվածքներ անբուժելի տարածում դերմատիտի, խոցի, վնասակար ուռուցքների և վոսնեական վնասվածքներ	—	Ռենտգենյան և ռադիո-ակտիվ տիպ կաբինետների կազմը։	—

ՍՈՍ. ԱՊՈՒՀՈՎ. ՄԻՍԻՊ. ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԻՀ՝ ՆԵՄԶԵՆԿՈ

ՊՈՍ. ՔԸՐՏՈՒԼԸՐ՝ ԿՈՒՉՅԱՏԻՆ

4 ՀՈՒԼԻՍԻ 1928 թ.

ՀԱՅ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0003265

[174.]

A II 23727